

ՅՈՎՀԱՆ ՕԶՆԵՑՈՒ ՆՈՐԱՅԱՅՏ ՏՕՆԱՑՈՑՑԱՅԻՆ ԵՐԿԸ՝
«ՆԱԽԱՀԱԻԱՔՈՒՄՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՅՍՄ ԲԱՆԻՑ՝ ՅՈՎՀԱՆՆՈՒ
ՎԵՐԾԱՆԱԻՂԻ»

Ալեքսան Յակոբեան

1964 եւ 1971 թթ. Վազգէն Յակոբեանի աշխատասիրութեամբ լոյս տեսած երկու հատորներով վերջապէս ամբողջացուեց առաջին անգամ Ը դարում Յովհան Օձնեցու կողմից ի մի բերուած եւ հետագայ դարերի ընթացքում բազմաթիւ նոր կանոնախմբերով լրացուած ու խմբագրուած հայ միջնադարեան գրական մշակոյթի ամէնից աւելի նշանակալի յուշարձաններից մէկը՝ «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի գիտական հրատարակութիւնը¹: Այն դարձաւ հայագէտների մի քանի սերունդների իրաւագիտական ու բանասիրական հետազոտութիւնների ամփոփումը եւ աշխատասիրողի կողմից 60-ից աւելի գրչագրերի մանրակրկիտ քննական համեմատութեան՝ անանցելի երախտագիտութեան արժանի արդիւնքը՝ բաւարարելով ի դարի գիտութեան ամենաբարձր պահանջներին: Սակայն «Մատենագիրք Հայոց»-ի Ը դարի հատորի նիւթերի պատրաստման ընթացքում մեզ համար պարզ դարձաւ, որ նշուած հրատարակութեան հետապնդած առաջին խնդիրը, այն է՝ «Կանոնագիրք Հայոց»-ի սկզբնաղբի Յովհան Օձնեցու հաւաքած կանոնական ժողովածոյի ընդգրկման եւ բովանդակութեան հարցը, կարիք է զգում նոր քննական վերլուծութեան:

Գիտաքննական հրատարակութեան հեղինակը, հետեւելով նախորդ ուսումնասիրողների եւ յատկապէս Հ. Ներսէս Ակի-

նեանի² տեսակէտին, ի վերջոյ կանգ է առել այն մտեցման վրայ, որ Յովհան Օձնեցու կազմած կանոնագիրքի բնագիրը փաստորէն անխաթար ձեւով պահպանուել է 1098 թ. ընդօրինակուած, «Կանոնագիրք Հայոց»-ի մեզ հասած հնագոյն (Նոր Ջուղայի թիւ 131) եւ կառուցուածքով ու ընթացքով վերջինիս յարող Ա ձեռագրախմբի միւս գրչագրերում (երկու հիմնական ենթախմբերով)՝ այդպիսով բովանդակելով այդ գրչագրերի առաջին 24 կանոնախմբերը, որոնցից 24-րդը հէնց Յովհան Օձնեցու 32 յօդուածից բաղկացած կանոններն են: Ըստ աշխատասիրողի՝ այդ ժողովածոյին հետագայ երկու դարերի ընթացքում աւելացել են շուրջ մէկուկէս տասնեակ նոր բնագրեր, իսկ Ժ դարի վերջերում հաւաքուած 36 կամ 39 կանոնախմբերի՝ ինչ-որ պատճառով վերադասւորման ու խմբագրման արդիւնքում կազմուել է մեզ հասած Բ ձեռագրախմբի գրչագրերի (երեք ենթախմբերով) անծանօթ մայր օրինակը, որտեղ Օձնեցու կանոնները դրուած են 36-րդ տեղում:

Հարկ է նշել, որ, ի տարբերութիւն նախորդ հետազոտողների, Վազգէն Յակոբեանը մանրամասն ուսումնասիրել է նաեւ մէկ տասնեակից աւելի այլ գրչագրեր, որոնք, նրա իրաւացի եզրայանգմամբ, չեն պատկանում «Կանոնագիրք Հայոց»-ի Ա

2 Տե՛ս Հ. Ն. Ակիճեան, Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսապետ Սիմեոն Յաղագս կարգաց եկեղեցոյ, Վիեննա, 1930, էջ 91-93, 108: Լմտ. նաեւ Ս. Տիգրանեան, Հայոց իրաւունքի պատմութիւն, Երեւան, 1923, էջ 139-147:

1 Կանոնագիրք Հայոց, Ա, աշխատասիրութեամբ Վ. Յակոբեանի, Երեւան, 1964, Բ, Երեւան, 1971

եւ Բ ձեռագրախմբերին (տեղին է նշել, որ նրանք մասնաւորապէս չուենն ընդհանուր յօդուածացանկեր եւ առարկայական ցանկեր): Նա գնահատել է դրանք իբրեւ պարզապէս «Կանոնագրքի» հետագայ համառոտման արդիւնք եւ, ի վերջոյ, հրատարակելով ամբողջապէս համեմատել նրանց ընթացքովները, դրանցից առաւել ուշագրաւները բաւականին մեծ ծաւալով ներկայացրել է երկու հատորների ծանօթագրութիւններում: Նշենք, որ ուսումնասիրողը նկատել է նաեւ այդ գրչագրերի իւրայատուկ տարբերութիւնները, որոնք թոյլ են տալիս բաժանել դրանք երկու հիմնական խմբի եւ, մասնաւորապէս, առանձնացնել «Կանոնագրքի» այլ օրինակներում չհանդիպող կանոնական մի քանի բնագրերի պարունակութեամբ աչքի ընկնող Մաշտոցի անուան Մատենադարանի (այսուհետեւ՝ ՄՄ) թիւ 659 եւ վերջինիս համեմատութեամբ բազմաթիւ պակասներ ունեցող, սակայն մնացեալում էական նմանութիւններ դրսեւորող ՄՄ թիւ 657 գրչագրերը:

ՄՄ թիւ 659 եւ 657 գրչագրերում ներկայացուած «Հայոց կանոնագրքի» տարբերակը վաղուց գրաւել է հետազոտողների ուշադրութիւնը³: Թէ՛ քննական հրատարակութեան հեղինակ Վազգէն Յակոբեանը, թէ՛ նրա նախորդ եւ յաջորդ բազմաթիւ ուսումնասիրողներ տարբեր աւիթներով նկատել են, որ այդ գրչագրերի պարունակած «լրացուցիչ» կանոնական նիւթերի եւ յայտնի կանոնախմբերում «լրացուցիչ» հատուածների մի մասը որոշ դէպքերում աւելի մեծ համապատասխանութիւն է դրսեւորում առանձին կանոնախմբերի այլալեզու կամ հայերէն յայտնի կամ վերականգնուող բնօրինակների

հետ: Հ. Ն. Ակիճեանը եւ Վ. Յակոբեանը դա համարել են հետագայ միջամտութիւնների արդիւնք՝ ըստ էութեան չխորանալով խնդրի աղբիւրագիտական եւ ձեռագրերի ճիւղագրութեան տրամաբանութեան մէջ⁴: Այնինչ ակնյայտ է, որ այդպիսի տարբերակի դէպքում ուղղակի հնարաւոր է բացատրել, թէ ինչու է աղբիւրների վերհանման ու ներառման նմանատիպ գովելի աշխատանքը կատարուել «օձնեցիական» դասական ու հնարաւորինս համակարգուած բնագրի պակասաւոր (եթէ չասենք՝ խեղաթիւրուած) ծաւալի վրայ, այն էլ վերջինիս ո՛չ ամբողջական ընդգրկումով: Ըստ այդմ, պարզ է, որ իրականութիւնը հակառակն է, եւ Յովհան Օձնեցու կազմած կանոնական հաւաքածոյին աւելի հարազատ պէտք է համարուի հէնց ՄՄ թիւ 659 եւ 657 գրչագրերում ներկայացուած «Կանոնագրքի» մայր տարբերակը, որը հետագայում լրացումներ ստանալով ու պակասեցուելով (այդ թւում նաեւ կորուստներ ունենալով, օրինակ՝ հեղինակի յիշատակարանը), հիմք է դարձել ընդհանուր յօդուածահամարակալումով եւ համակարգման այլ յատկանիշներով օժտուած «դասական» կանոնագրքի ստեղծման (խմբագրման) համար:

Չխորանալով մանրամասնութիւնների մէջ եւ թողնելով դա Յովհան Օձնեցու կազմած կանոնական հաւաքածոյի նոր քննական բնագրի գիտական առաջադրանքին՝ համառօտ նշենք, որ այդ հաւաքածոյի սկզբնագիրը մի՛ կողմից առանց էական խմբագրումների (թէպէտ եւ արտագրութիւնների ընթացքում որոշակի խեղաթիւրումների ենթարկուելով) հասել է ՄՄ թիւ

3 Մանրամասն մկարագրութիւնը տե՛ս Մաշտոցեան Մատենադարանի «Ցուցակ ձեռագրաց»-ի վաղուց սպասուած Գ. հատորում, որը շուտով դուրս կը գալ տպարանից:

4 Պարտաւոր ենք նշել, որ նմանատիպ աշխատանքը մեր կողմից տեխնիկապէս հնարաւոր էր կատարել միմիայն Վ. Յակոբեանի ամենայն ջանասիրութեամբ եւ ազնուորէն ճշգրտութեամբ իրագործուած ձեռագրական ընթացքումների հսկայածաւալ համեմատութիւնից յետոյ եւ դրա շնորհիւ:

659 եւ 657 գրչագրերի մայր օրինակին, ինչպէս նաեւ աղբիւր դարձել 7 կանոնախմբերի ընդգրկմամբ մի Համառօտ Կանոնգրքի տարբերակի ստեղծման համար (վերջինս արտացոլուած է ժե-ժէ դարերի ՄՄ թիւ 835, 837, 2576, 7060, 8459 եւ 9311 գրչագրերում՝ պայմանական երկու ենթախմբերով), իսկ միւս կողմից՝ հիմք դարձել առաջին մեծ խմբագրման համար, որը կատարուել է Թ դարի երկրորդ կէսին: Այդ ժամանակ Յովհան Օձնեցու ժողովածոն հարստացուել է յունարէն կանոնական բնագրերի թարգմանութիւններով (մասնաւորապէս՝ տիեզերական եւ այլ եկեղեցական ժողովների պակասող կանոններով), ինչպէս նաեւ Հայաստանում ստեղծուած մի շարք բնագրերով: Այս խմբագրութեան որոշ չափով Համառօտուած եւ ընդօրինակումների ընթացքում որոշ խեղաթիւրումների ենթարկուած վիճակն է մեզ հասել (երկու ենթախմբերով) Վ. Յակոբեանի կողմից միայն ծանօթագրութիւններում ներկայացուած ժՁ-ժէ դարերի ՄՄ թիւ 648, 3562 (այդպէս նաեւ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի՝ 1285 թ. ընդօրինակուած թիւ 274) եւ 649, 650, 651, 658, 2964, 3369 (այդպէս նաեւ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան Մատենադարանի՝ 1678 թ. առաջ ընդօրինակուած թիւ 345) գրչագրերում: Ժ դարում այս առաջին «մեծ» խմբագրութեան հիման վրայ կատարուել է Կանոնագրքի շուրջ 40 կանոնախմբերի նոր, արդէն «դասական» համակարգում, որի ընթացքում կատարուել է յօդուածների ընդհանուր համարակալում եւ կազմուել են նրանց ընդհանուր ցանկն ու առարկայական ցանկը:

Կարելի է յաւելել, որ, ինչպէս երեւում է առաջին մեծ խմբագրման հետ համեմատութիւնից եւ մի շարք այլ հանգամանքներից, այս առաջին դասական կանոնագրքի տարբերակը մեզ է հասել Հ. Ն. Ալիսնանի եւ Վ. Յակոբեանի մատնանշած

ոչ թէ Ա, այլ Բ ձեռագրախմբի գրչագրերում (երեք ենթախմբերով, որոնցում լրացուցիչ կանոնախմբեր են աւելացուած, սակայն առանց ընդհանուր համարակալման լրացման), իսկ մինչեւ 1098 թ. կատարուել է դասական տարբերակի նոր խմբագրում՝ ինչ-որ չափով փոխելով (էլ աւելի կարգաւորման ու նոր կանոնախմբերի ներդաշնակ ներառման նպատակով) կանոնախմբերի դասաւորութիւնը եւ վերջինիս համապատասխանող նոր յօդուածացանկի ու առարկայական ցանկի կազմումով: Այդ վերջին խմբագրման շատ վաղ ընդօրինակութիւնները մեզ հասել են 1098 թ. (Նոր Ջուղայի թիւ 131) եւ ԺԳ դարի (ՄՄ թիւ 6409) երկու հնագոյն օրինակներով ու նրանց յանգող մի քանի տասնեակի հասնող արտագրութիւններով⁵: Դրանց ամբողջութիւնը կազմում է Հայ միջնադարեան կանոնագրքի ամէնից աւելի համակարգուած եւ սրբագրուած (թէպէտ, միաժամանակ, Յովհան Օձնեցու բնօրինակից բաւականաչափ հեռացած) տարբերակը:

Շարադրուած պատկերից հասկանալի է դառնում, որ Յովհան Օձնեցու կանոնական ժողովածոյի բնագրի վերականգնման համար անհրաժեշտ է հաւասար իրաւունքներով վերլուծել եւ համեմատել վերը նշուած բոլոր ձեռագրական խմբերի ընթացումները՝ թէ՛ վերականգնելի բնօրինակից համեմատաբար քիչ շեղուած (նպատակադրուած խմբագրման եւ կանոնակարգման բացակայութեան իմաստով) ՄՄ թիւ 659 եւ 657 գրչագրերի, թէ՛ նոյն պատճառով նոյնպէս առաւել հարազատ մնացած, սակայն համառօտուած Կանոնագրքի (7 կանոնախմբից բաղկացած), թէ՛ առաջին մեծ խմբագրման արդիւնքում

5 Հարկ է նշել, որ Բ ձեռագրախմբի առաջին եւ յաջորդական մայր օրինակներ եւ առաջին գրչագրեր համեմատուել են Ա խմբի պատկանող ձեռագրերի հետ, որի արդիւնքում ստացուել են խառն ընթացումներ ներկայացնող տարբերակներ:

ի յայտ եկած Թ դարի բնագրին յանգող գրչագրերի եւ թէ՛ դասական խմբագրման հետեւանքով առաջացած Ա եւ Բ ձեռագրախմբերի 5 ենթախմբերի (որոնցից միայն երկուսի մայր օրինակներն են հասել մեզ ուղիղ ձեւով) հաղորդած ընթացումները: Սակայն, միաժամանակ, թուում է, թէ բաւարար հիմքեր կան ենթադրելու, որ ՄՄ թիւ 659 գրչագրի նիւթերի պատկանելութիւնը հէնց Յովհան Օձնեցու գրչին կարելի է անկասկած համարել:

Արդ՝ ՄՄ թիւ 659 գրչագրի պարունակած 31 կանոնախմբերից՝ 27-րդը, որի գիտական բնագիրը կը ներկայացուի ստորեւ, կրում է «Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից՝ Յովհաննու Վերծանաւորի» վերտառութիւնը (թ. 287ա-310ա): Նրա պատկանելութիւնը Յովհան Օձնեցուն ուսումնասիրողների կողմից յատուկ էի քննարկուել: Միայն Հ. Ն. Ալիսնանն է ուշադրութիւն դարձրել, որ նրա վերտառութիւնը որոշակի նմանութիւն է դրսեւորում Յովհան Օձնեցու մատենագրութեան վենետիկեան հրատարակութեան մէջ ընդգրկուած առաջին նիւթի (այսպէս կոչուած «Ատենաբանութեան») վերնագրին⁶: Այդ վերնագիրն է. «Երանելոյ Տեառն Յովհաննու կենցաղումն իւր եւ ի դալն յաթոռ հայրապետութեան եւ հաստատել բազմապատիկ եւ զանազան կարգս եւ կրօնս եկեղեցւոյ», իսկ նախորդող «Ցանկ գրոցս»-ում ընդարձակ վերտառութեան գրոցս»-ում ընդարձակ վասն իւր ըստ առաջնումն կենցաղին ուսումնասիրութեան միանգամայն եւ աստուածսիրութեան, եւ յաղագս Աստուծոյ առ նա խնամակալութեանն...»⁷:

Մեզ դեռեւս չի յաջողուել գտնել այս «Ատենաբանութեան» հրատարակութեան

ճշգրիտ ձեռագրական հիմքը եւ դրա շնորհիւ այն տարանջատել Մխիթարեան միաբանութեան հրատարակիչների հաւանական յաւելումներից: Առայժմ ստիպուած ենք միայն ենթադրել, որ օգտագործուած է Յովհան Օձնեցու Կանոնագրքի Թ դարի առաջին մեծ խմբագրմանը յանգող ինչ-որ գրչագիր: Վերջիններիս՝ մեզ յայտնի օրինակներում, ուր պակասում են «Ատենաբանութեան» առաջին երկու յօդուածները, վերնագիրը համառօտ է. «Երանելոյն Յովհաննու Իմաստասիրի»⁸: Բոլոր դէպքերում, ե՛ւ բնագրի համեմատութեան, ե՛ւ իւրայատուկ բառազանձի վերլուծութեան, ե՛ւ ՄՄ թիւ 659 գրչագրի ընդհանուր գնահատականի հիման վրայ կարելի է բաւարար հիմք տեսնել ստորեւ ներկայացուող երկի հեղինակութիւնը Յովհան Օձնեցուն վերագրելու համար:

Այս երկը տօնացոյցային է եւ ընդգծուած հակաքաղկեդոնական ուղղուածութիւն ունի: Յովհան Օձնեցու տօնացոյցային անդրադարձերն արձանագրուած են նրա մի շարք երկերում (վերը յիշուած «Ատենաբանութիւն», «Սակս ժողովոց...», «Կանոնք...») եւ ընդունուած գիտական գրականութեան մէջ⁹: Սակայն ստորեւ հրատարակուող բնագիրն ամէնից աւելի մեծ ծաւալով է ներկայացնում նրա մօտեցումներն այդ բնագաւառում եւ փաստօրէն ամբողջացնում մեր պատկերացումները «Գիրք Ընթերծուածոց»ի Ը-դարեան տարբերակի մասին: Պէտք է յաւելել, որ, լինելով տօնացոյցային, այս երկը նաեւ կանոնական է, այնքանով, որքանով թէ՛ Յովհան Օձնեցու կանոններում, թէ՛ ուրիշ կանոնախմբերում մեծ ուշադրութիւն է

8 Տե՛ս, օրինակ, Հ. Ս. Ծեմճեմեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի վենետիկ, Վենետիկ-Ս. Ղազար, 1996, էջ 338, 443

9 Տե՛ս, օրինակ, Ռ. Յ. Վարդանեան, Հայոց տօնացոյց (4-18-րդ դարեր), Երևան, 1999, էջ 36,

6 Յովհաննու Իմաստասիրի Աձնեցոյ Մատենագրութիւնը, էջ 7-34

7 Նոյն տեղում, էջ 7, 9

դարձուում Հայոց քրիստոնէական տօները կարգաւորմանը: Իսկ նրա նախադրական բնոյթը թոյլ է տալիս ենթադրել, որ Հեղինակը գրել է այն հէնց իբրեւ իր հաւաքած կանոնական ժողովածոյի մուտք:

Բնագրի հրատարակութիւնը կատարուած ենք մէկ ձեռագրով յայտնի գրական յուշարձանի հրատարակման ընդունուած սկզբունքներով: Վերականգնումները տալիս ենք միայն ամէնից ակնյայտ դէպքերում եւ քառակուսի փակագծերի մէջ, իսկ եթէ տառ է փոխուում, ապա նաեւ ծանօթագրուած ենք: Եթէ վստահ ապացուցելի է, որ ընդունուած ձեւերից շեղումները հէնց գրչական վրիպակի արդիւնք են (այլ ոչ թէ կարող են կապուած լինել բարբառային, խօսուածքային կամ վաղնջական գրելաձեւերի հետ), վերականգնում չենք տալիս՝ բաւարարուելով շեղատառ նշումներով: Կէտադրական նշանների մէջ օգտագործուած ենք կլոր փակագիծը, որը չափազանց հեշտացնում է բնագրի ընկալումը ժամանակակից ընթերցողի կողմից: Տողատակի ծանօթագրութիւնները գերազանցապէս վերաբերում են բնագրագիտական խնդիրներին եւ պատմամշակութային հարցերի լուծման յաւակնութիւն չունեն¹⁰:

/278ա/ ԻԷ. Նախահաւաքումն Պատմութեան այսմ բանից՝ տեառն Յովհաննու Վերծանաւղի

1 Ի մերձանալ սպառման ժամանակիս տեսաք, զի նուազեալ էր երկիր, յառեցաք, զի ընդունայնացան բնակիչք դամետրումն¹¹, եւ սկսան գալ ի կատարումն տառք մարգարեիցն: 2 Սկսան երեւել նշանք եւ /278բ/ զոր ետ Փրկիչն վասն կատարածի աշխարհիս: 3 Եւ յաճախեաց ա՛նարկնութիւն, ցամաքեցաւ սէր, արատեցաւ Հաւատ, եւ սկսաւ տարածել որումն ցորենակերպ սուտ վարդապետութեան: 4 Եւ բարձաւ առաջնորդութիւն ճշմարիտ վարդապետացն, ընծայեցան նշանք յարեգական եւ ի լումնի եւ յաստեղս: 5 Ըստ Աւետարանին նախադրութեանն՝ սկսան եւ կարապետք նեոխնն ընթանալ ընդ երկիր պէսպէս աղանդիւք՝ մոլորեցուցանել զտիմարս:

6 Եւ իմ տեսեալ զայս ամենայն վտանգս՝ տարակուսեալ վարանեցայ, թէ արդեւա՞յք առժամայն եւհաս ներգործութիւն չարին, եւ եդ դերաքրիստոնն զուղումբրամած թագն ի գլուխն իւր եւ գաւակալեցաւ: 7 Չի թնայեալ եւ ճշմարտեալ գիտեմք, թէ չէ երեւումն չարին, այլ /279ա/ լոկ սկիզբն երկանց, սակայն վասն առհասարակ յետսդարձութեանն ամենեցուն ուղիղ Հաւատոյն եւ զարտուղելոյս յարքունական ճանապարհէն՝ Հիացեալ դողալք: 8 Եւ վասն այս ըստերիւրութեանս Հարկ եղեւ ինձ՝ ըստ ազդեցութեան շնորհին յառեալ ի ժամանակականս եւ վերծանեալ ենթատարաբար¹² զգրատրական տառս նոցա՝ եւ Հետագատել ներհունապէս զՅով-

10 Խորիմ երախտագիտութիւնս եմ յայտնում ուսուցչիս՝ Պարոյր Մուրադեանի՝ հրատարակող բնագրի տողատման ու կետադրման վերաբերեալ մանրակրկիտ դիտողութիւնների համար, ինչպէս նաեւ Նարիմէ Ռաֆեանի, առանց որի սիրալիր օգնութեան թերի կը լինէր աստուածաշնչային հատուածների վերհանումը:

11 Հաւանաբար, «ցանց», «թակարդ» Աշանակութեամբ պարսկերէնից փոխառեալ դամ (պարսկ. դամ, դամեար՝ «թակարդ», «բանտ») բառի՝ առաջին անգամ հանդիպող տարբերակն է: Հնարատր է, որ սկզբնօրինակում եղել է դամետրումն փխ դամետրումն:
12 Գրիչը սկզբում գրել է եմթատաբար, ապա տա հատուածի վերեւում փոքրիկ ու աւելացրել:

սէպոս¹³, զՓիլոլին, զԵրիանոս, զՓարիկանոս, զԿղեմմէս, զԿղէսիաստէս, զԵւաէբի Պամիլիլայ՝ զԵւաէբի Կեսարիայ զՔրոնիկոնն, ոյքնապէս զԵպիփան՝ Պարունականն, զՈրոգինէս՝ բաղդաստող զգիրս Աստուածաշունչս: 9 Եւ Հոգէպատում բաղդատեցի զնոսա առասականաբար եւ բազում խելա/279բ/ մտութեամբ եւ Հանճարով լցայ ի նոցանէ: զի ամենեքեան նոքա ժամանակապատումք եղեալ են¹⁴, յարացոյցք ժամանակաց եւ Հնագիտագիրք եւ շարագիրք:

10 Սոքա պատմեցին զամենայն յեղմունս իրացն, որ եղեալ են յաշխարհի յիսկզբանց մինչեւ ի կատարումն կենաց իւրեանց, սոքա յայտնեցին զառաջնոցն զուղղափառացն զորթողոգսական խոստովանութիւնն եւ զչարափառացն եւ զմեղաւան աղանդախումբ Հերձուածոյն զընձիւնաբանութիւնն¹⁵: 11 Սոքա յայտնեցին զերեք[Հ]արիւր աղանդան, որ ներսամտեցին յեկեղեցի, ըստ որում գաղափարի ասէր առակողն. Կալարուք մեզ աղուեսս փոքրկունս՝ զապականիչս այգեաց մերոց, եւ /280ա/ անդաստանք մեր ծաղկեալ են¹⁶: Սամիսոն Յ աղուեսաւքն Հրդեհեաց զոճ այգեացն, եւ սատանայ Յ աղանդաք շփոթեաց պղտորեաց զՀաւատս քրիստոնէից: 12 Սոքա յայտնեցին զպատրիարգան առաջինս չարաղանդան, որք յետ սուրբ առաքելոցն գաւակալեցան յաթոռս Հայրապետականս եւ ձեռնամուխ եղեն ի սուրբ Կտակարանս, նաեւ ի կենդանատուր իսկ Աւետարանն, եւ փոփոխեցին եւ այլայլեցին զաստուածաբանութիւնսն Քրիստոսի՝ Որդւոյն Աստուծոյ, եւ զՀոգւոյն Սրբոյ, եւ յայնքան անցին յանդգնութիւն, զի եւ Աւետարան մի՛ գտցի ի նոսա առանց Հայհո-

յովեան, փոփոխեցին զտանս եւ զՀոգեւոր զսահման գրոց ընթերցուածոյն Հակառակ առաքելոց՝ առ ի յեղ/280բ/ ծումն սուրբ Հատոց:

13 Սոքա յայտնեցին ի շարադրութիւնս իւրեանց զանուանս գայլոցն ապականչացն, զոր եւ ես փոքր մի նշանակաւ շարագրեցից զանուանսն: 14 Առաջինն՝ Արտեմոն, երկրորդն՝ Իսողոս, ապա՝ Թէոդորոս, Վաղնտիմոս, Կաղարբոս, Մարկոս, Սիմոն, Բասելիդէս, Սատորնիմոս, Կերինթոս, Եբիւրոնոս, Նիկողայոս, Կերդիոն, Մարկիոն, Մատիանոս, Ռիփանոս, Կայիանոս, եւ այլք սոցին նմանք: 15 Ոմանք ի սոցանէ կնկղատրք եղեալ են, եւ ոմանք փոխանորդութիւն ընկալան: 16 Եւ եղեն ամենեքին սոքա Հմուտք արտաքին արուեստից եւ զբարտք գրեալն չարաչար մեկնեցին եւ զբազումս ի ձեռն արուեստաւոր բանիցն /281ա/ կործանեցին՝ նմանախաւերով եւ անմանսիս խորհելով: 17 Եւ ժամանակին թագաւորքն եւ իշխանքն ա՛նարեք՝ եւ նոքա Հպարտանալով ի փիլիսոփայական արուեստն, եւս յիշխանութիւնն՝ զամենայն կրանսն եւ զկարգս սուրբ առաքելոցն կամակորեցին: 18 Չայս այսպէս պատմեալ է ժամանակագիր արանցն:

19 Եւ որպէս կարգեալ է՝ զաւուրս շարագրեալ է (յարէ եւ զՅովհաննու¹⁶ աւետարանչի զերկայնութիւն կենացն¹⁷ մինչեւ Ծ ամն Տրայիանոսի կայսեր). ցուցեալ է եւ ասացեալ զառաջոյն Արտեմոնն, թէ աշակերտեալ էր Յովհաննու աւետարանչի, ո՛չ բարեւեր կամաւք, այլ քողախնդրի: 20 Որպէս նենգաժտոն Աբեսողոմ խորամանգութեամբ յինքն /281բ/ յարէ զԻսրայէլ՝ նշկահեցուցանելով ի Հարէն, նոյնպէս Արտեմոն յինքն յարէր զբազումս ի նորա Հատիցն եւ յորոտս վայրացն ի յեզեր իւր ի Յովհաննէ: 21 Վասն որոյ ասէր սուրբն Յովհաննէս. Որդեա՛կք, յետին ժամանակ է,

13 Բնագրում գրիչը գրել է Յովսէպ, սակայն ա տառի վրայ Աշան է դրել եւ լուսանցքում Աշել՝ պոս:
14 Բնագրում գրիչը գրել է եղեն, սակայն ու տառի վրայ Աշան է դրել եւ լուսանցքում Աշել՝ եալ (որեմն՝ եղեալ են):
15 Թերեսս պէտք է լինէր զընձեռնաբանութիւնն՝ իբրեւ տարբերակ աւելի տարածուած ընձեռնութիւն բառի («տըչութիւն», «աւանդութիւն»):
16 Տե՛՛ Երգ. Բ 15

16 Գրիչը սկզբում գրել է միայն Յովհանն, սակայն յետոյ բառավերջում փոքրիկ ու է աւելացրել:
17 Գրիչը սկզբում գրել է կենաց, սակայն յետոյ բառավերջում փոքրիկ Ա է աւելացրել:

եւ թէ արդէն իսկ նեոնիմ եկեալ են, եւ եթէ առ ի մէնջ ելին՝:

22 Եւ Հրապուրէր ամբարիշտն այն զՀաւանեալն իւր որպէս եւ ի սկզբանն աւան զԵւայ: 23 Նա ասէր ցԵւայ յետ առաջնոյ Հերձուածոյ. «Մինչեւ ցայսքան նեացս բազմութեան ծառոց դրախտին Համարձակութիւն ետ Աստուած ուտել յայս ծառոյ զի՛ արգել: 24 Չի՛նչ փառք են, զի՛նչ պատճառք: 25 Աղէ տէ՛ս յոյժ եւ քննեա՛յ, յոյժ՝ ներամտեա՛, կա՛յ իմն յիրսոյ»: 26 Այսպիսի դիմաւք ի կարծիս ար/282ա/կաներ զնա եւ աղմկէր զսիրտն: 27 Եւ իբրեւ խարդաւանեաց զնա եւ երկմտեցոյց, տիրացաւ ի վերայ զգայական¹⁸ մտաւորութեան նորա եւ ասէր. Թէ ուտէ՛ աստուածի իննիք: 28 Նոյն խարդաւանութեամբ¹⁹ եւ Արտեմոն ասէր ցՀրապուրեալն իւր. «Չի՛նչ Համարիցիք զկարծեալ առաքելոցն զաւետարանութիւնն, որ զանխլացուցին եւ թաքուցին²⁰ զլրութիւն Հաւատոյն եւ սուղ ինչ վարդապետութեամբ դաւանեցին [յ]երկրի»: 29 Եւ իբրեւ աւճաբար, նոյն խորամանկութեամբ ճեղքէր զմիտս նոցա յառաքելոցն: 30 Փսիսէր ապա զմաղձս դառնութեան ի չար սրտէն եւ ասէր, եթե՛ «Գուցէ այլ ոք առաքինանայցէ²¹ ի մարդկանս եւ յառաջիցէ քան զմեզ յարքայոս/282բ/թիւնն, եւ լինիցիմք առաջինքս յետինք, եւ յետինքն՝ առաջինք»: 31 Ըստ այնմ մտերմացուցաննր ինքեան զաշակերտն:

32 Աւան զԱստուած ամբ[աստան]²² առնէր ընդ Եւայի, եթէ՛ Վասն այնորիկ

18 Գրիչը սկզբում գրել է զգայծնողական, սակայն յետոյ խնամքով մաքրել է ծնող հատուածը: Բ ՏԵ՛՞՞ Ծ՛՛. Գ. 5
19 Գրիչը գրել է խարստաւանութեամբ, յետոյ ջնջման կրկնակէտեր դրել երկրորդ ա-ի վրայ: 20 Գրիչը սկզբում գրել է թագուցին, յետոյ գ-ի վրայ նշան է դրել եւ լուսանցքում ուղղում տուել՝ ք: 21 Բառը վրիպակով է ընդօրինակուած՝ աստաքի-նանայցէ (առաջին ա-ն՝ անխորհ տողի վերջում): 22 Բնագրում բառը բարբառային վրիպակով է ընդօրինակուած՝ ամպաստան (վերականգնում):

յապաւեաց²³ ի ձեռն Աստուած զծառոյն կերակուր, եթե՛ գուցէ նաշակիցէ՛ եւ աստուածի լինիցիք: 33 Եւ Արտեմոն զառաքելոցն ամբաստանէր, եթե՛ «Առ չարութեան եւ կեղակարծութեան չեղին լրութեամբ զխոստումն Հաւատոյն եւ զկրանս եկեղեցւոյ, եթե՛ գուցէ գերայարցէ ոք քան զմեզ ի յաթոռ դատողութեան»: 34 Չայս այսպէս ամբաստանէր՝ զրպարտեալ եւ ապա յայտնեալ զխորհեալս սրտին, եւ ասէր. «Ապաքէ՛ն, զոր աւետեացն Գաբրիէլ (տարեառք եւ անտարեառք, գոյք եւ անգոյք /283ա/ առՀասարակ ցնծան)՝ ո՛չ կանոնեցին եւ ո՛չ կարգեցին գիրս ընթերցուածոց, նոյնպէս եւ ո՛չ զար մկրտութեանն կանոնեցին, զայնպիսի Հրաշալի աւր, յորում միածինն Աստուծոյ մկրտութեամբն ի Յորդանան վերստին ծնանէր զորդիս մարդկան»: 35 Ո՛չ լոկ զներկական ժամանակին զմարդիկ, այլեւ զանցելոցն եւ զապառնեացն միանգամայն վերածնէր՝ ընդ զմարգարեականն, եթե՛ երկնեաց երկիր եւ ծնաւ ի միում աւուր ազգ մի ողջոյն միանգամայն: 36 «Յայնմ աւուր եցոյց, - ասէր, - զփառս աստուածութեանն եւ նշանաւք անտի սկիզբն առնէ[ր] ամենայն Հրաշիցն, զոր արար: 37 Յայնմ աւուր բացմամբ երկնից Հոգին Սուրբ աղանակերպ իջմամբ Հանգչէր ի վերայ նորա: 38 Յայնմ աւուր աստուածարեալ բարբառն /283բ/ Հար՝ յերկնուտ վկայելոյ տնարիսեցելոյն՝ ընդ զընդհանուր աշխարհն: 39 Արդ, մարթ ինչ իցէ²⁴ ասել՝ զայսպիսի փառաց աւր անյիշատակ առնել եւ ո՛չ կանոնել ի տանախմբութիւն»: 40 Չայս դէմ երեւեցուցանելով Արտեմոն՝ զբազումս ածէր ի Հաւանութիւն իւրոյ կամակոր վարդապետութեանն:

23 Գրիչը սկզբում գրել է յապաւիճեաց, յետոյ խնամքով մաքրել ին հատուածը: Գ Հ՛՛՛՛. Ծ՛՛. Գ. 5
Դ Ե՛՛. Կ. 9. 8
24 Գրիչը սկզբում գրել է մարթիցէ, ապա թի հատուածի վերեւում նշան է դրել եւ լուսանցքում աւելացրել՝ ինչ (ուրեմն՝ մարթ ինչ իցէ):

41 Յայնժամ յեղափոխէր յեղոյր զգիրս ընթերցուածոց եւ ստեղծանէր ի մտաց իւրոց: 42 Եւ կարգէ ի գլուխ ընթերցուածոցն ի ԻԵ Մարտի ամսոյ զԱլեքսիս Գաբրիէլի՝ իւրով կանոնան, նոր²⁵ յարինուածով եւ ի Չ Յոնուարի՝ զարմկրտութեան՝ իւրով կանոնաւ, նոր կարգաւ: 43 Չայս այսպէս յարմարէր, եւ տարածանէր լուրն զերկիրն, ի ժամանակի բարեփառութեանն /284ա/ զարանայր:

44 Վասն որոյ ի Նիկիական սինճոդոսին ի քնին առեալ սուրբ Հարցն՝ Հաստատեցին զնոյն կարգ Հաւատոյ զառաքելոցն եւ ասէին. «Ամենայն՝ ոք, որ եւ Համարձակեցի լուծանել զսահմանս եւ զկարգս մեծի սուրբ ժողովոյս վասն ամենայն սուրբ տանից փրկութեան առ ի փոփոխել՝ նզովեալ լիցի՛»: 45 Դարձեալ ապացին վասն եկեղեցւոյ իրաց կարգի եւ կրանից եւ տանական ուխտից. «Եւ տանախմբութեան եւ Հաւատոյ Հրաման տուաք, զի Հաստատուն եւ անշարժ կացցէ այն, որ եղեալն է եւ Հաստատեալն է ի սուրբ առաքելոցն»: 46 Ապաքէ՛ն, եթե՛ արտեմոնադիր տանախմբութեանցն կարգ Հաստատեալ էր ի Նիկիայ, նոյն Հաստատեալ լինէր եւ յերկրիս Հայոց: 47 Բանդի սուրբն Ռատակէս /284բ/ եկն եբեր զկանոն զայն ի Հայս: 48 Եւ սուրբն Գրիգոր Հաճութեամբ ընկալաւ եւ եկեղեցեացս Հայոց զնոյն գիրս ընթերցուածոց Հաստատեաց եւ ո՛չ ուրեք երեւեցոյց զտանս²⁶ ինքեան եւ ո՛չ ուրեք երեւեցոյց զտանս²⁶ ինքեան եւ Մկրտութեան:

49 Յաւուրս մեծին կոստանդիանոսի նուաղեցին Հերձուածք յերկրէ, բայց յաւուրս որդւոյ նորա անդրէն զարացան: 50 Եւ սկսան Արտեմովսի կարգքն վերստին նորոգել որպէս եւ երանելոյն կիրովի Երուսաղէմացւոյ գրեալ է, թէ՛ «Յայլքաղաքն Շնոնդ առնեն, դուք Դավթի եւ

25 Գրիչը սկզբում գրել է որ, ապա ո-ի վերեւում փոքրիկ և աւելացրել: 26 Բառը վրիպակով է ընդօրինակուած՝ գտանս: 27 Գրիչը սկզբում գրել է յայնալ, ապա երկրորդ և-ի վրայ նշան է դրել եւ լուսանցքում ուղղում տուել՝:

Յակովբայ տանեցէ՛ք»: 51 Երանելին կիրեղ յիւրում ժամանակին անշարժ պահեաց յերուսաղէմ զամենայն զկրանս եւ զկարգս, զոր եղեալ էր մե/285ա/ծին Յակովբայ՝ եղբարն Տեառն, առաջնոյ Հայրապետին Երուսաղէմի: 52 Ո՛չ որպէս ոմանք կարծեն, եթե՛ կիրեղ կարգեաց զընթերցուածս. անցեալ ժամանակքն ի Շնդեանէն Բրիստոսի մինչեւ ցկիրովին՝ ամբ մատ չորեք[Հ]արիւր, ապա զայնչափ ժամանակն առանց աստուածավայելուչ տանից եւ աստուածազան յիշատակաց կացին եկեղեցիք Բրիստոսի: 53 Բա՛ւ լիցի, ո՛չ այնպէս ընթերցուածքն անկարգին ի Յակովբայ եւ յամենայն առաքելոցն կարգեցան, բայց ըստ ժամանակս ժամանակս զանխլացան յամբարշտաց:

54 Կիրեղ զերախայիցն ընթերցուածն եւ զխորհրդածութեանն մեկնութեամբ գրեաց եւ զիշատակ սրբոցն զանազանեաց: 55 Ո՛չ ի Կիրեղէ ինչ են սկզբունք ընթերցուածոց եւ ո՛չ ի յՈրոգիներ, որպէս ոմանք /285բ/ Համբաւեն, այլ սուրբ առաքելոցն: 56 Յովհաննէս աւետարանիչ (Համեկաց յետ Յարութեանն Բրիստոսի), որ գլուխն էր ամենայն շորհաւանդ պարգեաց²⁸ Հոգւոյն Սրբոյ եւ սիրելի Բրիստոսի քան զամենայն երկրածինս, նա յարինէր զեկեղեցի յիշատակաւք Բրիստոսի, զոր ինքն իսկ Փրկիչն աւրիւնադրեաց, թէ՛ Հանապազ զմահ իմ յիշեսցի՛ք²⁹, մինչեւ եկեցես՝: 57 Բայց Որոգիներայ Եւբոդի եւ այլ սուրբ Հարցն մնայր, որ յետ բազում ժամանակաց եղէն յերկրի: 58 Երանելին կիրեղ զառաքելոցն նորոգեաց զներգործութիւնն իւրում վիճակին, եւ Երուսաղէմացիքն անշարժ կացին մինչեւ ի յաւուրս Յուստինոսի կայսեր վասն նորին երկապառակութեան եւ Հերձմանց, որպէս եւ գրեալ է յերուսաղէմացւոց թղթին³⁰, զոր փոքր մի շարա/286ա/ գրեցից:

28 Բնագրում՝ պարգեաց (վերականգնում): 29 Բնագրում վրիպակով՝ յիշեսցիք: - Հ՛՛՛՛. Լ. Կ. Բ. Ժ. Լ. 26
30 Փիլոն Տիրակացու «Ժամանակագրութեան» վերջին «Կայսերը Հոռոմոց...» հատուածում, ո-

59 «Մեք, - ասէ, - որ յԵրուսաղէմն բնակեալ ենք, զորս տեսաք զսքանչելիսդ, պատմեմք ձեզ, որ ի Հայսդ էք: 60 Ի ԼԴ ամի թագաւորութեանն Յուստինոսի կայսեր սկսաւ սատանայ մարտնչել ընդ ճշմարտութեանն, եւ փոփոխեցին զսուրբ Հաւատն եւ այլայլեցին զկարգս տանից, զոր եդ սուրբն Յակովբոս՝ եղբայրն Տեառն: 61 Քանզի մտեալ առաջի թագաւորին Հրոնայ ոմն Հերիտիկոս, գրգռէր զթագաւորն վասն աւուրն Տեառնընդառաջաց, թէ չէ պարտ թոյլ տալ Երուսաղէմացոց՝ արտաքոյ եկեղեցական կարգաց առնել զար Շննդեանն եւ Քառաններորդաց, այլ որպէս ամենայն երկիրս Հոռոմոց տանէ, պարտ է եւ նոցա տանել: Եւ թագաւորն ոճնկնդիր եղեալ³¹: 62 Եւ վաղվաղակի գրէր թագաւորասաստ /286թ/ Հրամանաւ առ ստոյգ³² Հայրապետ քաղաքին եւ առ կղերիկոսս եկեղեցեաց, եթե՝ «զՏեառնընդառաջան³³ ըստ Շննդեանն արարէք՝ Փետրուարի ամսոյ յերկունս»: 63 Յայնժամ Հայրապետն, Հանդերձ բնակչաւք քաղաքին, պահաւք եւ աղաւթիք եւ յորդաբուխ արտասուաւք գոչեցին առ Աստուած: 64 Եւ յանկարծակի նշան յԱստուծոյ երեւեալ առաջի սակերաց թագաւորին՝ սուրբ սինն, որ ի Սիովն, ուր բազմութիւնն ժողովեալ էին, ջուր բոխեալ՝ առ ի խայտառակել զանարէն Հրաման թագաւորին: 65 Եւ ամենեցուն տեսեալ՝ փառաւոր առնէին զԱստուած: 66 Այս առ սոքիւք³⁴ եղեալ:

րից, հաւանաբար, բառացի քաղել է ստորեւ շարադրուող դրուագը Յովհան Օձնեցի, պատմութեան փխ թղթին (տե՛ս Մատենագիրք Հայոց, հտ. Դ-Ե, է դար, Անթիլիաս, 2005, էջ 961-963):

31 Բնագրում գրիչը գրել է եղաւ, սակայն բառի վրայ նշան է դրել եւ լուսանցքում նշել՝ եալ (ուրեմն՝ եղեալ):

32 Փիլոն Տիրակացու մօտ՝ Ոստոքոս փխ ստոյգ (թերեւս այդպէս նաեւ վերականգնելի է):

33 Բառը վրիպակով է ընդօրինակուած՝ զտեսուողն տառաջն:

34 Փիլոն Տիրակացու մօտ՝ Ոստոքի փխ սոքիւք (թերեւս այդպէս նաեւ վերականգնելի է):

67 Ապա դարձաւ³⁵ առ Մակարաւ ի նմին աւուր տանի յանկարծարէն այլ զարս սաստիկս, եւ թուղթն առաքեաց թագաւորն առ ի կա/287ա/տարել զչար խորհուրդն եւ սատակել զամենեսեանն, որք ոչ կատարեն զՀրամանն թագաւորին: 68 Յայնժամ ցեալ շնորհաւք Հոգւոյն բազմութեան քաղաքին՝ ետուն զանձինս ի մահ: 69 Եւ զարացն կամեցեալ կատարել զՀրամանս թագաւորին՝ արկանել ի սուր զքաղաքն՝ անդէն յանկարծակի եւս Հրաշալի եւ աճեղակերպ նշան երեւեալ: սուրբ կոյսն Մարիամ, ոճնելով ի գիրկնն զՓրկիչն Յիսուս՝ տպաւորեցաւ ի նմին սեանն, եւ ի վերայ աջոյն Տեառն՝ խաչ մի ծիրանի: 70 Եւ տեսին արդարք եւ մեղաւորք առՀասարակ, եւ բժշկեցան բազում ախտաժէտք: 71 (Բայց առաջին նշան սքանչելի ի վերայ) Հայոց եղեւ զի կին մի սողուն ի Մոկաց, Սողոմէ անուն, որոյ ԻԴ ամբ էին, /287թ/ զի կարկամեալ կայր, եւ լինել³⁶ Հրաշիցն՝ առաջին նա՛ եգիտ զողորմութիւն: 72) Եւ զարացն տեսեալ զսքանչելիսն՝ դարձան առ թագաւորն»: 73 Չայս յԵրուսաղէմացոց թղթին³⁷ գրեցաք:

74 Բայց թեպէտ³⁸ եւ յայնժամ անշարժ կացին Երուսաղէմացիքն, սակայն որք յետ նոցա եղեն, ուրացան զկտակն, նշկաճեցին զգիտութիւնն³⁹ (Յոբնաղ պատրիարզն Երուսաղէմի), որ յետ կիւրդի կալան զաթոռ Հայրապետական յԵփեսոսի ժողովոյն, եւ ի Քաղկեդոնի ժողովոյն՝ ի նոյն եղեալ պատրիարգք: 75 Եւ թեպէտ զայլ կրանան եւ զկարգան եւ զՀաւատս զՔաղկեդոնի ժողովն կարգեաց յԵրուսա-

35 Թերեւս պէտք է լինէր դարձեալ, ինչպէս Փիլոն Տիրակացու մօտ է:

36 Բառից առաջ հետագայ ձեռագրով ի է աւելացուել:

37 Թերեւս պէտք է լինէր թղթէն:

38 Բնագրում գրիչը գրել է թէպ, սակայն վրան նշան է դրել եւ լուսանցքում յաւելում տուել՝ էտ:

39 Բնագրում գրիչը գրել է դիաթեկն, սակայն ե-ի վրայ նշան է դրել եւ լուսանցքում ուղղում տուել՝ ի. ուրեմն՝ դիաթիկն (յուն. «կտակ», «անդարձագիր»):

ղէմ, սակայն զտանախմբութեանց զկարգն ո՛չ առին յանձն տարափոխել գլխաւորք քաղաքին, այլ նոյն Յակովբեան ընթեր/288ա/ցուածովքն վարեցան մինչեւ ի Տիբեր կայսրն: 76 Բայց վասն կրանաւորելոյն Յոբնաղի ըստ Քաղկեդոնի ժողովոյն զՀաւատոյն խոստովանութիւնն յայտնի է յամենայն դիմաց: 77 Վասն որոյ երանելին Սերաւամ Մամիկոնէնից⁴⁰ եպիսկոպոսն, որ ի սրբոյն Սահակայ ոճնէր զերիցութեան ձեռնադրութիւնն, այր ճշմարիտ եւ լի Հաւատովք Հոգւոյն, ազդ առնէր շրջաբերական թղթովք ամենայն աշխարհիս Հայոց՝ մի՛ ումէք ճանապարհորդել⁴¹ ի քաղաքն Երուսաղէմ, եւ մի՛ պղծել Հաղորդութեամբ ընդ [Յ]ոբնաղի ձեռնադրեալս եւ աղանդակիցս: 78 Նոյն պատուեր եւ Հրամանն ելեալ թղթոց յաշխարհս եւ ի Յովհաննէ Հայոց կաթողիկոսէ, որ յետ սրբոյն Սահակայ⁴² յաջորդեցաւ ի յա/288թ/թոռ Հայրապետութեանն: 79 Եւ մինչեւ ցայս ժամանակս նոյն Հրամանն ի վարդապետաց զգուշացեալ էին եկեղեցիքս Հայոց:

80 Արդ, աւանիկ⁴³ դարձան յետս: 81 Եւ մէք, թեպէտ եւ տգէտ ենք, սակայն ի շնորհաց սուրբ Հարցն եւ մեզ կարողութիւն ետ Աստուած՝ տեռազերծեալ զարտեմնադիր ընթերցուածոց զպատրուակեալ կեղծաւորութիւնս: 82 Բայց քանզի բազումք են Հետեւողացեալ նմա, վասն տեսանելոց ի նմա՝ զար աւետեացն եւ զմկրտութեամբ շուրջ ծաղկեալ եւ շարա-

40 Բառը գրելուց յետոյ գրիչը, կարծէք, փորձել է մաքրել երկրորդ և տառը, ուրեմն ըստ նրա՝ Մամիկոնէնից:

41 Բնագրում գրիչը գրել է ճանապարհորդեալ, սակայն յետոյ վերջին ա-ի վրայ կրկնակէտ է դրել՝ որպէս ջնջման նշան:

42 Գրիչը որ յետ Սահակայ բառերը սխալմամբ երկու անգամ է գրել (հնարաւոր է, որ շփոթութեան պատճառը մայր բնագրում հանդիպած՝ կաթողիկոսների այս անսպասելի հերթականութիւնն է եղել), սակայն մկատել է եւ վրան կրկնակէտերով ջնջման նշաններ դրել:

43 Բնագրում գրիչը գրել է աւանիք, սակայն ք-ի վրայ նշան է դրել եւ լուսանցքում ուղղել՝ կ:

մանեալ⁴⁴ մարգարեական եւ արինաւոր տառիք եւ արտայայտեմք իսկ: 83 Ո՛չ անսան ամենայն մարդ, որ ըստ երկրաւոր Հանճարոյ Հետազատէ զանճառելիսն Աստուծոյ, Հարկ է նմա ըստերիւրել յաստուածառաւք⁴⁵ /289ա/ ճանապարհէն, որպէս եւ յայնժամ արինաւորքն՝ Հաւատացեալքն ի Քրիստոս, ըստարտուղեցան նախանձահինդիրք արինացն Մովսիսի: 84 Չորոց ասէրն Յակովբոս ցառաքեալն Պաղոս. «Տեսանէ՛ս, եղբայր, քանի՛ բիւրք են Հաւատացելոց Հրէից, եւ ամենքին նախանձահինդիրք են արինացն, եւ երագիկ եղեն վասն քո, թէ ապստամբութիւն ուսուցանես ի Մովսիսէ: 85 Բիւրապատիկ բիւրքն այն միաճոմեալ միաբանեալ են վասն Մովսիսական արինացն, թէ պարտ է յամենայն ազգս աւանդել: 86 Եւ ասէին. «զՍերաւամ ընտրեաց Աստուած յամենայն ազգաց եւ սիրելի եւ բարեկամ անուանեաց, ցոր եւ ասաց իսկ՝ Հայր ազգաց բազմաց արարից գեբգ՝, եւ ի գաւակի բում /289թ/ արինացիս մեծնայն ազգք երկրիէ: 87 Ապաքէն միջնորդ յարակայ բարեկամութեանն Աստուծոյ խոստմանցն⁴⁶ բարեաց թլփատութիւնն եղեւ. եւ զի զթլփատութիւնն ետ միջնորդ ո՛չ նմա միայն, այլ եւ զաւակի նորա մինչեւ յաւիտեան, նաեւ ի ձեռն Մովսիսի զնոյն կտակն Հաստատեաց, ասէ. Թլփատեցի ձեր ամենայն արու՛, եւ՝ որ ոչ թլփատեցի՝ սատակեցի ի ժողովրդեմն իւրմէ՛: 88 Ահա յետ այնչափ ժամանակաց, յորժամ եկն Որդին Աստուծոյ մարմնով յաշխարհս, թլփատեցաւ եւ եմուտ ընդ արինաւք: 89 Եւ զնոյն յարասանեալ՝ ասաց, ասէ, թէ՛ Մի՛ համարիք, եթե՛ եկի լուծանել զարեմս կամ զմարգա-

44 Բնագրում՝ շարամանեայ փխ շարամանեալ (վերականգնում):

45 Բնագրում՝ յաստուածառաւ փխ յաստուածառաք (վերականգնում):

«Տէ՛. Ն՛. Ժ. Ե. 5. Հ. 17

բ. Ն՛. Ի. 9. 4. Գ. 17. Գ. 25

46 Գրիչը գրել է խոստամանցն, սակայն յետոյ առաջին ա-ի վրայ ջնջման նշանակէտեր է դրել:

Գ. Ն՛. Ժ. Ե. 11

Դ. Տէ՛. Ն՛. Ժ. Ե. 14

րէս. ո՛չ եկի լուծանել, այլ՝ լնուլ՝: 90 Արդ, եթե բառնայ, - ասէին, - /290ա/ միջնորդն, այսինքն՝ թլփատուծիւնն, բառնայ եւ բարեկամութիւնն ընդ Աբրահամու եւ ամենայն ուխտ զաւակին»:

91 Չայս ամենայն բանս յարինեալ ասէին ժողովուրդք Հրեից Հաւատացելոց ի Քրիստոս: 92 Որպէս եւ այժմ բազումք յամառեալ պնդեալ են, եթե պարտ է ըստ Աւետարանին եւ զաւետեաց արն եւ զծննդեանն եւ զմկրտութեանն յիրաքանչիւր Հանդիպողութեան տանել, նոքա ըստ Աբրահամու եւ ըստ Սահակայ եւ ըստ Մովսիսական արինացն եւ ըստ Քրիստոսի թլփատութեանն ազնուի[...]47, եւ Համարէին յաղթողանալ եւ գերակայի[.]48 ի վերայ ամենակարողութեանն Աստուծոյ: 93 Եւ արդարեւ իսկ ըստ երկրաւորին իմաստիցս եւ ատենակալ դատաւորացն ո՛չ էր Հնար ումք /290բ/ յաղթել նոցա, զի կտակն Աբրահամու եւ արեւքն եւ մարգարէքն եւ պեղոփտութիւնն49 Քրիստոսի նոցա վկայէին: 94 Եւ թէպէտ ամենայն դիմաւք յամենայն կողմանց յաղթող կարծէին երեւել, սակայն առաքելոցն եւ աստուածարեալ Հրամանացն ո՛չ ընդդիմանային, այլ Հնազանդ լինէին: 95 Բառնային միաբանութեամբ զարինացն կրաւորութիւնն տնարինական ներգործութեամբն Քրիստոսի, մարմնաւորութեամբ իշխանութեամբ:

96 Արդ, մինչ նոքա, որ ընդ արինաւք փակեալ էին, Հնազանդ եղեն առաքելասահման կիտին, որչա՛ փ եւս առաւել սոցա պարտ է Հնազանդել առաքելաբարող Աւե-

տարանին, որք ի Հեթանոսաց կոչեցան յորդէգրութիւն շնորհաց Հոգւոյն Սրբոյ, եւ թողուլ ի բաց զընդունայնաբանութիւնն զայն, որ ի պատճառս /291ա/ աւետեաց աւուրն եւ ծննդեանն եւ մկրտութեանն, ըստ Հրապուրանաց Արտեմովսի՝ անարգել զհրամանս եւ զկարգս սուրբ առաքելոցն եւ սրբոյն Գրիգորի եւ զԵկեղեցական ժողովոյն, որ զայս ընթերցուածս աւանդեցին կաթողիկէ եկեղեցոյ: 97 Բայց պարտ է Հայաստան աշխարհիս ի ճառագայթարձակ եւ յանստուեր շաւղաց սրբոյն Գրիգորի գնալ, որպէս գնամք ի տունջեան ի լոյս արեգականն, եւ մի՛ մնալ նսեմութեան գիշերոյն, զորմէ ասաց Փրկիչն. Գայ գիշեր, յորում ո՛չ ոք կարէ գործել: 98 Արդ, թեպէտ եւ եկն եւ Հաս գիշեր, մեզ անմտանելի արեգակն տուաւ վարդապետութիւն սրբոյն Գրիգորի, եւ ո՛չ ոնիմք պէտս լուսնի եւ աստեղաց: 99 Չի թեպէտ եւ բնութեամբ աստեղք յերկինս եւ յոգնաւեղք50 /291բ/ են, սակայն ի ծագել արեգականն՝ առ Համեմատել բազմաց նոյն ծածկին: 100 Եւ թեպէտ եւ բնութեամբ եղան յեկեղեցոյ շնորհք վարդապետութեան, եւ բազմացան վարդապետք, սակայն աստուածաւանդ շնորհաց Հոգւոյն Սրբոյ զեղաւ Հեղաւ առատապէս ի վերայ սրբոյն Գրիգորի՝ որպէս ի վերայ առաքելոցն զանխլացեալ են ամենեցուն վարդապետք եւ ո՛չ բաղդատին յըրոնց նոյն միոյն ոնիցն51: 101 Եւ չէ սխրալի, զի ամենակարողին Աստուծոյ Հրամանքն են այն, եւ որ գնա[.] լուսովս, այն ո՛չ գայթակղի:

102 Չայս ասացի ո՛չ առ ի յազարտել զսուրբ վարդապետսն, քա՛ւ լիցի, այլ զանՀամեմատ բարձրութիւնն աստուածախաւս վարդապետութեան նորա Համակ երեւցուցից: 103 Բանգի ո՛չ ներբողումն /292ա/ արեգականն քամահանս ինչ աստեղաց է

- Տէ՛՝Ո՞ւրբ. Ե 17
47 Տողավերջում աւելի մանր տատերով գրուած ազնուի բառի իմաստը հասկանալի չէ: Քանզի որ յաջորդ տողի սկզբում էլ մի քանի տառի տեղ բաց է թողած, մեզ թուում է, թէ գրիչը չի կարողացել վերծանել մայր օրինակի ինչ-որ երկար ու դժուարընթեռնելի բառ, նրա տեղը բաց է թողել, ապա այնուամենայնիւ որոշել է ընդօրինակել իր հասկացած վեց տառերը:
48 Բնագրում՝ գերակայիս փիս գերակայի (վերականգնում):
49 Բառը յունարէն է եւ Աշահակում է թլփատութիւն:

Է Յ՝ՎԸ. Թ 4
50 Գրիչը սկզբում գրել է յոգնահողք, ապա ո-ի վրայ Աշահ որել եւ լուսանցքում ուղղում տուել՝ ե:
51 Բառը գուցէ կարելի է հասկանալ նաեւ՝ ունիցիոն վերականգնելով (կէտադրութեան համապատասխանեցմամբ):

յարացոյց, այլ զմիականութիւն տանին յարասանեաց սուրբն Գրիգոր, յարինական միաբանութեան տնարինեցելում եկեղութեան անեղին: 104 Եւ անյերկուանալի է, զի մարդկային բնութիւնն, զոր զգեցաւ ի Կուսէն Բանն Աստուած, յաստուածային միաբանութիւնն բնաւորեալ է, եւ ո՛չ երկուորի, ո՛չ անձն՝ յանձին, ո՛չ դեմ՝ ի դիմի, եւ ո՛չ բնութիւն՝ ի բնութեան: 105 Վասն այնորիկ մին եւ մի է Տէր Յիսուս Քրիստոս, եւ երկ[.]ութիւն ո՛չ գոյ ի նմին: 106 Եւ որք երկու բերէ ի նա կարծիս երկ[.]ութեան՝ սխալ է: 107 Ահա, որպէս աստուածութեամբն ո՛չ ինչ յափշտակութիւն52 Համարեցաւ զլինելն Հաւասար, սոյնպէս եւ յետ ոնայնացուցանելոյ զանձն եւ զկերպարանս ծառային առնելոյն ո՛չ ինչ կամակարութիւն Համարեցաւ /292բ/ զլինել Համեմատ Հար: 108 Այլ ասէ. Ես եւ Հայր իմ մի եմք՝: 109 Եւ Հայր ո՛չ լոկ զանսկզբնաւոր ծնունդն զեական, այլ եւ զառժամանակեալ] ծնունդն ըստ մարմնոյն ո՛չ ինչ բռնազբաւսութիւն Հաշուեցաւ իրացուցանել ինքեան: 110 Այլ ասէ. Ես այսաւր ծնայ զբոգէ, եւ՝ ընդ քեզ է ինձ սկիզբն աւուրցէ:

111 Նոյն գաղափարաւ ներամտելի է եւ միականութիւն տանախմբութեանն: 112 Արդ, վասն առաւելութեան փառացն Հար եւ վասն իրացուցանելոյն ինքեան զկուսածին ծնունդն՝ ամենեկին աներկաւորելի է եղելութիւնն եւ միականութիւնն ծննդեանն եւ սկիզբն արարութեանն: 113 Ի սոյն գաղափար եւ զՄեղքիսեղեկ ետ արինակ, զի արինական ճշմարտութիւնն ծանիցի. մարդ էր ամենեկին Մեղքիսեղեկ՝ եղեալ /293ա/ յառնէ եւ ի կնոջէ, ո՛չ ծնողքն նորա եւ ո՛չ Հայրական բնութիւն ազգատոհմին նորա եմուտ ի թիւ Հա-

մարաց, եւ ո՛չ իւր եղելութիւնն եւ կամ մահն գրեցաւ ի գիրս: 114 Եւ ինքն՝ ո՛չ յանարգաց ոք, այլ քաւանայ Աստուծոյ բարձրելոյ եւ թագաւոր Սաղիմայ եւ քան զԱբրահամ մեծարոյ, բայց վասն աւանդապաւնմանութեանն, զոր ի Քրիստոս էր կատարելոց, անՀայր ասի եւ անմայր՝ չՀամարել յազգա: 115 Արդ, որպէս արինակն ամենայնիւ ընդ ճշմարտութեամբ փակեալ է, նոյնպէս եւ մարդկութիւնն Քրիստոսի ամենեկին ընդ ամենայն տեսակս գոյացութիւնն, ընդ աստուածութիւնն բնաւորեալ է:

116 Նոյնպէս ար աւետեաց Գաբրիէլի ընդ ծննդեանն աւուրն փակեալ է եւ ո՛չ արտա[.]յայտի53: 117 Եւ ո՛չ Հնար է բարեփառաց տանել զար Աւետեացն եւ զՄկրտութեանն յայտնա/293բ/ պէս, վասն զի ար ծննդեանն գահակալեցաւ, կալաւ զառաջին տեղի, եւ սկիզբն եղել Աւետարանին եւ ընթերցուածոց եւ տանական կարգաց եկեղեցոյ: 118 Արդ, սկիզբն է Ծնունդ ամենայն բարութեանց, որ յանդականութեանէն աւանդեցաւ սրբոյ54 եկեղեցոյ: 119 Բարձան աւետիք ամենայն աւետաւորաց յարինացն աւետարանութեանց, եւ միաշունեաց ընդ պատճառի, քանզի ամենեքեան աւետաւոր եղեն մարմնանալ Բանին, նախաստեղծն եւ ամենայն մարգարէքն եւ նահապետքն, եւ ինքն իսկ Հայր գլխովին՝ նոյնպէս եւ աւետաւոր: 120 Բանգի ի գալն առ Աբրահամ Հրաշալի աւետ[.]ալքն բերկրեցոյց զնա՝ յասելն, եթե՛ ի գաւալի Բուս արհնեսցի ամենայն ազգք Երկրի՞, որում սուրբ առաքեալն վկայեցուցանէ՝ /294ա/ ասելովն, թէ՛ Աւետեաց իսկ է քանս, եթե՛ ի ժամանակի յայսմիկ եկից, եւ եղիցի որդի Սառայիէ:

121 Հանգոյն սմին եւ սուրբն Գրիգոր շարածչգրտէ զՀարէ ի պատարման աւե-

52 Գրիչը սկզբում գրել է յափշտակութե (վերջին տառը պատուոյ Աշահի տակ), սակայն յետոյ ե-ի վրայ կաթականաձեւ Աշահ է դրել եւ լուսանցքում գրել ի՝ պատուոյ Աշահի տակ (Իւն):
- Յ՝ՎԸ. Թ 30
Է Ս՝ՂԲ. Բ 7, Գ՝ԳԲ. Թ Գ 33
Գ Տէ՛՝Ո՞ւրբ. Ը Թ 3

53 Բնագրում՝ արտաճեռի փիս արտայարի (վերականգնում): Բառը նոյն՝ «ցուցարդե» իմաստով օգտագործուած է ստորեւ (նախ. 139):
54 Բնագրում՝ սրբոյ (վերականգնում):
Դ Ն՝. Ի Գ 4, Գ՝ԳԲ. Գ 25
Ե Հ՝՝՝. Թ 9

տեացն, եթ՛ «Եւ զիւր որդւոյն գալ մտա- նել անդ մարմնով առնուլ մարմին ի զա- ւակէն Աբրահամու եւ լինել որդի Աբրահա- մոս»: 122 Արդ զոր աւետիս պարտ է մե- ծարոյ Համարել՝ զԳաբրիէլին, եթ՛ զՀաւրն փառաց, քանզի Հայրն է պատ- ճառ ամենայն աւետաբանութեանցն: 123 Բայց զի աւետիքն նախընթացք էին զալստեանն՝ որպէս կարապետն, վասն այ- նորիկ ըստ նախագայութեանն ծննդեան յանգաման աւուր ծննդեանն եւ մի եղեն: 124 Վասն այնորիկ ո՛չ գոյ տեղի, եւ ո՛չ աւր տանելոյ ի կատարումն՝ քան զգեղին: 125 Աւետիքն ո՛չ յառաջ քան զ/294բ/ Ծ- նունդն իշխանութիւն է տանել, եւ ո՛չ զԿ- նի, զի Ծննդեանն են աւետիքն, եւ միու- թիւն է: 126 Վասն որոյ յովթերեակ⁵⁵ ա- տուրս Ծննդեանն կանոնեցին առ ի յիշա- տակել սուրբ առաքեալքն զաւետաւորու- թիւն սուրբ Աւետարանաւքն, զի ամենայն ուրուք ծանուցեալ զմիութիւն տանին՝ նո- վիմբ շատասցի, եւ մի՛ ինդիր լիցի այլ ա- տուր աւետաւորութեան: 127 Սակա այնո- րիկ, որ տանէ զտան Աւետիսն յաւուր ա- ւետեացն՝ անարգէ զփառս Ծննդեանն:

128 Նոյն վարդապետութիւն է եւ մարմնոյ բնութեանն. ընդ անտեսանելի եութեամբն թուոյն միացեալ է, եւ ո՛չ եր- կաւորի, զի բնութեամբ է միութիւնն, եւ ո՛չ գոյ ժամ զերկուան ճառելոյ: 129 Եւ որ յա- րէ ոք երկուս թիւս ի Քրիստոս ի պատ- ճառս բնութեանցն՝ անարգէ զփառս միու- թեան Երրորդութեանն: 130 Ի /295ա/ նոյն վարդապետութիւն եւ ի ծածկել խորհուրդս անքնին⁵⁶ եւ սրբոյ Կուսին ծնաւոր եւ Հոմն տոհմեայք ո՛չ գրեցան յազգաւամարս Աւե- տարանին: 131 Ի նոյն վարդապետութիւն եւ վասն անսկզբնական ծննդեանն, որ ի Կուսէն. մի տանախմբութիւն երեւցուցալ է, եւ ո՛չ երկաւորի: 132 Վասն որոյ եւ ո՛չ երկրածին Հսար է ասել ըստ երկուց ծննդոց զՏէրն Քրիստոս, բայց միածին ե- լեթ: 133 Ի նոյն վարդապետութիւն եւ ի

55 Գրիչը գրել է ութերորեակ, սակայն երկրորդ ո-ի վրայ կրկնակէտով ջնջման նշան է դրել: 56 Բնագրում՝ անքնին (վերականգնում):

ծածկելոցն Հրաշից՝ եւ Որդին Աստուծոյ, որ է Որդի մարդոյ, ո՛չ ոնի երկուց որդուց կարծիս, այլ յաւետ մի Որդի:

134 Ի նոյն տրամագ[ր]ութիւնս Հիմ- նակալութիւն Հաւատոց եւ զՄկրտութիւնն ընդ Ծննդեանն միացոյց. եւ ո՛չ խախ- տեաց զկանոն Ծննդեան երկախումբ յաւ- րինուածով, այլ ի նմին միացոյց՝ առ ի /295բ/ ստուգել թէ միոյն միայնոյ էւ Ծ- նունդն, էւ Մկրտութիւնն. վասն Երրոր- դութեանն պատուոյ ընդ միաբանութեամբ աստուածութեանն փակեաց զմարմնոյն բնութիւնն, եւ վասն եռաւորաման տաւ- նիցն, որ ի ձեռն Մովսիսի ոնէր, զայն խորհրդոյն արինակումն ընդ ծննդեանն փակեաց⁵⁷: 135 Զի որպէս ի ծննդեանն Հաւր միշտ եական Աստուած ճանաչի Բանն Աստուած, նոյնպէս եւ ի ծննդեանն Կուսին միշտ Աստուած իմանալիցի⁵⁸ մարմնացեալ Բանն Աստուած: 136 Եւ մի՛ ըստ ոմանց Հերձուածողաց՝ մարդ սոսկ դաւանել զնա մինչեւ ցՄկրտութիւնն. քանզի Արտեմոն եւ Մարկիոն եւ Բասելի- դէս դերաքրիստոսեայք, տրամամիտք, անսուրբք իմաստունք, ա[պ]աքքն⁵⁹ զին- քեանս կարծելով յաւետ քան զառաքեալ՝ երկուս բնութիւնս ասացին զՔրիստոս եւ յերիս տանս բաժանեցին զմի տանն եւ եղծումս արարին կարգաց առաքելասաւ- ման եկեղեցւոյ:

137 Իսկ եթ՛ աղարտելով զայս՝ այլ եւ այլ /296ա/ ասիցէ զաւր ծննդեանն եւ մկրտութեանն, գիտասցէ, զի ըստ շրջակա- նի ամացն, որ բոլոր Թ եւ Ժ ամբ, յերկրոր- դում մասին տարաբերեալ՝ աւր ծննդեանն ըստ յառաջաւատել վանակացն ի լրման

57 Գրիչը բնագրում բաց է թողել «զմարմնոյն բնու- թիւնն ... փակեաց» (2 տող) հատուածը, որը նկա- տելով՝ նախորդող «փակեաց» բառի վերջում կրկնակէտերի նշան է դրել եւ իր վրիպածը երկու տողով լրացրել ձախ լուսանցքում: 58 Գրիչը գրել է իմանացի, սակայն իր վրիպումը նշել է՝ այց հատուածի վրայ կրկնակէտեր դնելով (կարելի է վերականգնել նաեւ՝ իմանի): 59 Բնագրում՝ առաքեն փխ ապաքեն (վերականգ- նում):

երեսնեկ ամացն փոխաբերի⁶⁰ ի⁶¹ յայլ աւր: 138 Եւ թծպետ փոխաբերի յայլ աւր, սա- կայն Հանդիպողութեամբ ըստ նախակարգ Հրաշիցն՝ ի նմին աւր կացեալ է մկրտու- թեան աւրն. փոխաբերի ի վեցերեկի⁶² նա- խատիսն, Ծնունդն ո՛չ փոխաբերի, այլ սովաւ զանփոփոխելի տնաւրէնութեանն միութիւնն Հրաշագանէ: 139 Ըստ որում ա- ռաքեալքն եւ բարեփառ Հարքն մի բնու- թիւն ասացին զմարմնացեալ Բանն եւ մի տանախմբութիւն արտայայտեցին զԾննդեանն եւ զՄկրտութեանն:

140 Ահա Հոգին Սուրբ ի շա/296բ/ րա- կայութիւն կենսաբեր Աւետարանին նա- խագահեցոյց զՅովհաննէս ի կատարման Աւետարանին, ի բողոքասիրութիւնն եղ- զնա կնիք Հաստատութեան եւ նովաւ ստուգեաց ի սկզբանէ զեութիւն Բանին առ ի Հաւր եւ զլինելն մարմին: 141 Եւ յետ նորա զՄա[տ]թէոս նախակարգեաց՝ նա- խաւաւաքելով զնա ի սկզբան Աւետարա- նին, եւ նովաւ ստուգեաց զԾնունդն ի Կուսէն, զՂուկաս, որով զաւետիսն պատ- մեաց, եւ զՄարկոս՝ զմկրտութիւնն շարա- կող, ընդ Յովհաննէս եւ ընդ Մատթէոս ի մեջ փակեաց: 142 Արդ, ոմանք ի վատա- փառաց ըստ Հրամանաց Արտեմոնալ], Հակառակ Հոգւոյն Սրբոյ՝ ի պատճառս Ա- ւետեացն ի վերջ ընկեցին զՄա[տ]թէոս եւ զՅովհաննէս, եւ զաւր աւետեացն արարին սկիզբն /297ա/ տանից, զի աւր Ծննդեանն, որ գլուխ էր ամենայն տնաւրինական նա- խախնամութեանցն Աստուծոյ, վերջացի, եւ աւր Աւետեացն նախագասեալ՝ սկիզբն եղիցի կանոնական կարգաց: 143 Բայց սուրբ առաքեալքն ո՛չ յարմարեցին ըստ վաշմտութեանն⁶³ այնմիկ, այլեւ՝ զԱւետա- րանացն յաւետաւորաշնութիւնն եւ զառաքե-

լոց եւ զմարգարեիցն գերազանցութիւնն⁶⁴ եւ զեկեղեցեացն զաւետաւորարճ բարձրու- թիւնն եւ զիւրեանց փառաւորութիւն եւ զկարգ եւ զպատիւ ըստ երկաքանչիւրոցն դիմացն յայտ արարին: 144 Ահա ի պատիւ սուրբ Յայտնութեանն եւ աշխարհակեցոյց սուրբ Ծննդեան, որ ի կուսական սուրբ արգանդին, Հրամայեցին ի Ե Յունուարի՝ իբրեւ կարապետի ժողովել ի Հովտանոցի (եւ ընթեռնու Աւետարան /297բ/ զՂուկա- սուն՝ ո՛չ զԱւետեացն, այլ զԾննդեանն), ապա ելանել ի վեհագոյն տեղին՝ ի գերա- գոյնն ի Բեդլէեմ (եւ ընթեռնու ի Մա[տ]թ- թէոս զԾննդեան Աւետարանն), եւ զամե- նայն մարգարեական տառան վկայաբար մշտնջենաւոր աւետարանել եւ արձանանալ ի նմին:

145 Ո՛չ առուղղեկանաբար, անցաւո- րաբար, այլ յարակայ աւրէնն էր յիշատա- կին, զի աւարտեցան բանք նոցա նախան- կար⁶⁵ գաղափարաւ՝ ըստ աւրինակի, զոր աւետարանեցին սակս անապական ծննդեանն: 146 Իսկ ի մեծ եւ ի գլխաւոր աւուրն վեցերորդի⁶⁶, ի գլխաւոր եւ յաւազ եկեղեցւոյն, ի սուրբ մատրանն, ի կաթողի- կէին, ի⁶⁷ մայրն եկեղեցեաց անուանի, անդ Հրամայեցին կատարել զկանոնն. եւ ո՛չ ա- ւետեաց Աւետարան ընթեռնուն /298ա/ անդ, եւ ո՛չ Մարգարե, այլ՝ Առաքեալ[ա]լ ե- լեթ եւ զՄա[տ]թէոսեան Աւետարանն, որ զԾնունդն Քրիստոսի պատմէ: 147 Եւ յերկրորդում աւուր ստորիջի՝ ըստ Հեռա- Հիւսակ դիմաց (մեծարեա՛ զաւրն Մա[տ]-

64 Գրիչը սկզբում գրել է գերազանցութե (վերջին տառը պատուոյ նշանի տակ), սակայն յետոյ այց հատուածի վերելում փոքրիկ ն է աւելացրել, իսկ վերջին ե-ի կողքին կրկնակէտերով ուղղման նշան դրել, ամենայն հաւանականութեամբ՝ ի փոխելու նպատակով (ուրեմն՝ ինն): 65 Գրիչը սկզբում գրել է նախակար, ապա ակ հա- տուածի վերելում փոքրիկ ն աւելացրել: Թերեւս սկզբնօրինակում կարող էր լինել նաեւ նախա- կարգ, որի վերջին գ-ն որեւէ գրիչ վրիպել է յա- ջորդող բառի գ սկզբնատառի պատճառով: 66 Գրիչը սկզբում գրել է վեցերորդի, ապա երկ- րորդ ո-ի վրայ կրկնակէտերով ջնջման նշան դրել: 67 Թերեւս պետք է լինէր որ փխ ի:

60 Գրիչը այս եւ յաջորդ տողի նոյն բառը սկզբում ընդօրինակել է փոխաբարի ձեռով, ապա վերջին ա-երը դարձրել է: 61 Գրիչը այս ի-ն սկզբում վրիպել է, ապա լրացրել երկու բառերի միջեւ՝ վերելում: 62 Բնագրում՝ վեցերեկի (վերականգնում): 63 Գուցէ պետք է լինէր վատմտութեանն:

թեոսեան Ալետարանին ի սուրբ Մատրանն խորհրդաբերելով): 148 Եւ ի չորրորդում ատուրն զիջուցանէ ի սուրբ Սիովն եւ կանոնէ զաւետեաց Ալետարանն՝ ո՛չ ըստ բարձրութեանն, այլ ըստ ստորագաւութեանն: 149 Եւ այսպէս զվեցերեակ⁶⁸ զատուրն զանազանէ ըստ իւրաքանչիւր ունակութեան, ի նոսա պարփակեալ ցուցանէ զԱլետիան եւ զՄկրտութիւնն:

150 Արդ, ըստ Հոռոմին, յորժամ զստոյզն ոք կամիցի իմանալ յԱպրիլի Չ է Ալետումն⁶⁹, եւ Յունուարի ի Չ-ն՝ Ծնունդ, եւ ի նոյն Չ Յունուարի յԼ-երորդաւ/298ր/մի՝ Մկրտութիւնն: 151 Իսկ ի Հայտան այսպէս Հանդիպեալ է Ալետեաց արն Գաբրիէլի ի Քաղոց ամսոյ ի ԺԻ եղեալ է, եւ նոյն ամսեանն՝ Փաքայն եւ Պասեք զատկացն: 152 Եւ Հոռի ամսեան ի ԺԼ՝ ծնունդն Քրիստոսի եղեալ է, որ եւ Յայտնութիւնն անուանի, եւ ի նոյն ամսեան յինն եւ տասներորդում, ի լրման Լ ամի մկրտութիւնն մարմնաւոր կենացն՝ ի մարմնի եղեալ Ժ-երորդումն շրջանակացն. ո՛չ ըստ Դիքտիկոնին պարագայութեանն, այլ ըստ շրջաբերութեան ամացն, որոյ մի ի նոցանէ ԻԼ ամ ունի յինքեան՝ իննետասներե[ա]կ տարաբերութեամբ զանազանեալ: 153 Ընդ որում պատշաճի, եթե յորում ատուր ծնաւ ի Կուսէն՝ յերեսներորդում ամի ի նմին ատուր մկրտեցաւ: 154 Վասն /299ա/ այսորիկ, որպէս զալետիան յետ երկերիւր ՀՉ ատուրց միացոյց ծննդեանն (եւ պիտոյ է առ սմին բանն Սաղ[ո]մոնի⁷⁰), նոյնպէս յերեսներորդում ամի միացոյց ատուր ծննդեան զար մկրտութեանն: 155 Ըստ այսմ խորհրդաբերութեանս աստուածաբելոյ՝ ո՛չ եղին առաքեալքն Գ տանախմբութիւնն՝ Ալետեացն եւ Ծննդեանն եւ Մկրտութեանն, այլ մի տանախմբութիւն երեւեցուցին: 156 Չի մեծ է պատիւ Ծննդեանն եւ նա-

խանկար⁷¹, եւ ի նմանէ եւ նովաւ եւ վասն նորա՝ Ալետիան: 157 Եւ վասն այնորիկ չէ ումեմն իշխանութիւն՝ տանել զար աւետեացն եւ յապաւել զաւետաւորաշ փառս Ծննդեանն:

158 Արդ, Համառատագոյն է եւ ճշգրտապէս այսպէս. յաւուր միաշաբաթի էջ միա/299ր/ ծինն ի ծոցոյ Հար, եւ յետ ԼԳ ամաց վերացաւ յաւուր Հինգշաբաթի յեական փառան, ուստի ո՛չ մեկնեցան: 159 Եւ յաւուր ուրբաթի ուրբաթացեալ դարուն՝ ծնաւ մարմնով ի սուրբ Կուսէն: 160 Եւ յաւուր ուրբաթի մեռաւ ի խաչին եւ էջ ի գերեզման: 161 Եւ յաւուր կիրակէի մկրտեցաւ քանզի յերեսներորդ ամի ար ծննդեանն ուրբաթի (ըստ երից ժամուց, որ ի Դ ամն եկամուտ լինի՝ ըստ եղանակացն զանազանութեան) ի կիրակէ փոխաբերի: 162 Արդ՝ կիրակէի մկրտեցաւ, կիրակէի յարեաւ ի մեռելոց, կիրակէի լինելոց է միւս անգամ գալուստն, յորում կենագործէ զորդիս մարդկան: 163 Վասն Ծննդեանն եւ Մկրտութեանն եւ Ալետեացն միակաւորութեան այս դէմք են:

164 Յետ այս/300ա/որիկ եղին ի ԺԱ ամսոյն Յունուարի զիշատակ մարտիրոսաց սրբոյն Պետրոսի եւ Աբիսողովմայ: 165 Եւ Հրաման ետուն զամենայն յիշատակ մարտիրոսաց զնոյն կատարել ո՛չ ի միում ատուր կատարել զիշատակս մարտիրոսաց, այլ միով կանոնաւ յիւրաքանչիւր յառանձնակի ատուր պատուել զնոսա: 166 Իսկ ոմանք զար նաւակատեաց Երուսաղէմի, որ ի ԺԳ-ի Սե[պ]տեմբերի⁷² կատարի (քանզի շինեալ երանելոյն Կոստանդիանոսի զամենայն եկեղեցիսն յերուսաղէմ), զԼ⁷³ ար կանոնեցին ի տանախմբութիւն, եւ զերկրորդ արն պայծառացուցին յաւուր Հրաշիւք եւ զկանոն ի սուրբ Մատրանն Հրամայեցին կատարել զի նա է

71 Գրիչը սկզբում գրել է նախակար, սպա նախա հատուածից յետոյ (տողավերջում) փոքրիկ տառերով անելացրել նր: 72 Բնագրում՝ Սեպտեմբերի փիս Սեպտեմբերի (վերականգնում): 73 Անհրաժեշտ է հասկանալ զուրբերորդ:

68 Բնագրում՝ վեցերեակ (վերականգնում): 69 Գրիչը անտումն բառը գրել է աջ լուսանցքում, տողավերջի է նախորդող բառի կողքին: 70 Բնագրում՝ Սաղամոնի (վերականգնում):

մայր եկեղեցեաց, եւ նա է սուրբ կա/300ր/-թողիկէ՝ մեծապատիւ եւ բարձրագաւ քան զամենայն եկեղեցիս: 167 Արդ, վասն Մատուուն անուանելոյ եւ զի ի մեր ի Մատրանս Հանդիպեալ է արն՝ առաջումն Համարեցան, թէ մարտիրոսաց յիշատակ է. եւ ո՛չ տանէ ոք յորտես երկրի: 168 Բայց Հայ ամիւք քանզի անխաղաք են, անշարժ⁷⁴ կան, իսկ տանքն եղանակացն⁷⁵ յառաջ խաղան, վասն այնորիկ սովորութիւն կալեալ է անտի եւ այսր՝ յորում ամսեան Հանդիպեալ է տանն ի սկզբանն ըստ Հոռոմին՝ ի նմին կան եւ առնեն: 169 Արդ, Հաւաստապէս Խյաչապերացի⁷⁶ տան է, ի ԺԴ Սե[պ]տեմբերի⁷⁷ կատարի, մարտիրոսացին ինդիր անդ ո՛չ կայ:

170 Աստանար բացայայտեցից նախ եւ ա/301ա/ուրջին զեռաւորաշ եկեղեցեացն զերկաքանչիւրոցն, թէ ըստ որո՞ւմ պատուի պարփակեալ ունի յինքեան զիրական փառան: 171 Սուրբ Սիովն զմարմնանալոյն Քրիստոսի եւ զառ ի նոյն միութիւն եկեղեցոյ ի ձեռն Հաւատոցն եւ կրանս քրիստոնէութեան բաղկացութեամբ յինքեան ենթակայեալ ունի: 172 Եւ է սկիզբն Հաւատոյ եւ փրկութեան եւ ունի զգերակայութիւն իւր ի մարմնանալոյն Քրիստոսի մինչեւ յաւանդումն Հոգւոյն ի ձեռն Հար: 173 Եւ Համառատի[ւ]՝ այսպէս. Քրիստոս ի մարմնի՝ ամենայն Հաւատացեալք Սիովնի ասի (ըստ որում Հայր ասաց մարգարէին. Սկիզբն արարից զՍիովն), այս ինքն է՝ զպատճառս փրկութեան ամենայն մարդկան՝ ի սկզբանէ եղելոցն եւ որք եղանինն, մարդեղութիւնն Քրիստոսի եղեւ:

174 Եւ /301ր/ ի Հոգւոյն ասանդամանէ մինչեւ ի Յարութիւն ամենայն ննջեցելովք՝ ի նախագոյիցն մինչեւ ցետնորդան, Գողգոթա ասի, քանզի սպանման տեղի էր, որում թաղեցաւ իսկ մահս: 175 Ուրբաթի պատշաճի, քանզի վեցերեակ⁷⁸ դարն կենասիրաց է, իսկ թաղումն՝ շաբաթի Հանգստեան, զի եւ զԷ-երորդ զդարուն զկերպարանս ունի: 176 Ըստ որում եւ ասէ՝ Նիրհեցին ամենեքեան եւ ի Բուս մտին⁷⁹՝ ո՛չ յերկարութիւն Հազար ամացն, այլ լսողութիւն ժամանակին՝ ըստ քթթել ական: 177 Եւ սուրբ Յարութիւնն՝ ի Յարութիւնն (ի Յարութեանէն Քրիստոսի մինչեւ ցմեծագո[ւ]լ⁷⁹ փողոյն Հնչումն), յորում կենսագործին ազգք երկնածնացս եւ նորարդարք, որ զիւր զանգրաւ զաստուածութիւնն՝ ի նոյնն⁸⁰ կատարեալ դարու ուրբաթուն: 178 /302ա/ իսկ կաթողիկէ, որ Մատուուն անուանի՝ եւթն դարուն մտեալս: 179 Ո՛չ զշաբաթ, այլ զկիրակէ քան շաբաթուն ակն⁸¹ մահ է, թէ արտաձգէ ոք՝ յանցեալսն արտաձգի, ո՛չ յապառնիսն, եւ եթե շարագնդէ ոք՝ ըստ ա[մ]փոփմանն⁸² եւ ըստ քթթել ականն: 180 Սակայն սկիզբն առնու կաթողիկէն ի դատողական ատենէն եւ տեւէ մինչեւ յանսպառ յաւիտենին՝ յինքեան ունելով զփառան Սիովնի եւ սրբոյ Յարութեանն եւ զիւր զանգր[ա]ւական⁸³ ուրախութեանցն զյարատեղողութիւնն, զի նա է վերնախորանն՝ բնակարան արքայութեանն:

181 Արդ, սուրբ Սիովն ի ժամանակի ընդ⁸⁴ կրանիւք փակեալ էր ըստ Սինեա-

74 Գրիչը գրել է անշարք, սպա վերջին տառի վրայ նշան դրել եւ լուսանցքում ուղղում տուել՝ ժ: 75 Գրիչը գրել է եղանակիացն, սակայն ի-ի վրայ ջնջման կայծակնաձեւ նշան է դրել: Թերես սպասելի էր՝ ըստ եղանակացն: 76 Այս բառից առաջ գրիչը մի քանի տառի տեղ է բաց թողել, որը մայր օրինակը վատ հասկանալու նշան է: Սկզբում գրել է խաչապերաց, յետոյ բառավերջում փոքրիկի անելացրել: 77 Բնագրում՝ Սեպտեմբեր փիս Սեպտեմբեր (վերականգնում): 78 Եւ... Իւ... 27

78 Գրիչը գրել է վեցերեակ, սակայն երկրորդ ո-ի վրայ նշան անելով՝ լուսանցքում ջնջման կայծակնաձեւ նշան է դրել: Է Մ... Ի... 5 79 Բնագրում՝ մեծագոջ (վերականգնում): 80 Գրիչը գրել է նոյնոյն, սպա երկրորդ ոյ հատուածի վրայ ջնջման կրկնակէտեր դրել: 81 Բառը գուցէ պետք է վերականգնել՝ ակն[յայտ]: 82 Բնագրում՝ անփոփմանն (վերականգնում): 83 Բնագրում՝ զանգրոնական (վերականգնում): 84 Գրիչը բնագրում վրիպել է ընդ բառը, սպա, կայծակնաձեւ նշան դնելով, այն գրել լուսանցքում:

կան լերինն, ըստ որում ափ, եթե՝ Ծառայ է որդուվի իւրովի հանդերձ: 182 Վասն զի Քրիստոս ծառայա/302բ/կան կերպարանաք թլիատեցաւ եւ ըստ արինացն կրանաւորեցաւ՝ սակա ազատելոյ⁸⁵ զՍիովն. եւ ազատեալ՝ վերագոչէ. Չեմ որդի աղախնոյ, այլ՝ ազատի՞, չեմ ծառայ, այլ՝ որդի՞: 183 Իսկ կաթողիկէն ընծայական անձամբ է, վասն այնորիկ, ասէ. Վերին Երուսաղէմ ազատ է: 184 Արդ, ի Սիովն եկեղեցւոյ ընթեռնուն գիրս մարգարեականս (իսկ ի կաթողիկէ եկեղեցւոյ ո՛չ ընթեռնուն Մարգարեականս)⁸⁶, զի ըստ վերոյ քաղաքին զարինական եւ զմասունսն անցուցեալ է, եւ ճշմարտութիւնն եւեթ թագաւորեալ է, եւ մի կատարելութիւն էին եղելոցն: 185 Քանզի յանգ ելեալ է բանն, եթե՝ Ես՝ ի նոսա, եւ դու՝ յիսէ, զի եղիցին կատարեալք ի մի: 186 Ըստ այսմ մտաց՝ ո՛չ յուրեքեակ աւուրսն Յայտնութեան, եւ ո՛չ ի նուիրական տանին, եւ ո՛չ յՈղորդմեան աւուրն Մարգարե ո՛չ ընթեռնուն, այլ՝ զընթերցուածն /303ա/ Չաքարիայ, որ զլուսնակին նստելն⁸⁷ պատմէ: 187 Թէպէտ եւ ճշմարտութեամբ մարգարեութիւնն յՈղորդմեան աւուրն կատարի, սակայն չորեքշաբաթին ի սուրբ Սիովնի եկեալ է, եւ ո՛չ յանդիման խորհրդոյն: 188 Բայց ի Չատկի շաբաթու վասն փառաւորութեան աւուրցն՝ յորովագոյն ի սուրբ Մատրանն Հրամայեցին կատարել զկանոնն եւ ընթեռնու զՄարգարեականն, զի պատճառաւոր է վասն փրկա-

ւետ խորհրդոյն չարչարանացն. ընթեռնուն Հնոյ կտակին պատմութիւնս: 189

Քանզի ամենքեան աւետաւորք են Բանին, պարտ էր ամենայն Աւետարանացն աստուածաբանիցն զյառաջախասութիւն մարգարեութեանցն ի մի բովանդակութիւն գումարել յար չարչարանաց Փրկչին, դարձեալ առ/303բ/անձնական կանոնն՝ ի սուրբ Մատրանն, որպէս անդի Ճննդեանն ի մարգարեութենէ, աստի Չատկի ի կաթողիկէն եւ ի վերացմանն եւ յորեղինէն՝ վասն աստուածազարդ Յարութեանն եւ անքնին⁸⁸ միութեան փեսային եւ Հարսինն: 190 Քանզի զառժամանակեայն զտարորոշ երաման արդարոց՝ զանցելոցն եւ զներկային, եւ զպառնոյն զպիտենից մեռեալն եւ զկենդանին, եւ որք յապայն լինելոց էին, Համանգամայն կենագործեաց՝ բաղկացուցեալ ինքեան անընդմիջելի միութեամբ, սակա այնորիկ ո՛չ Հաշուի զինքն, որ Մատուռնն անուանի: 191 Եթե՛ յերկրի իցէ աստուածավայելոջ զարդու Հարսնացեալ եւ Հասեալ յառագաստ փեսային ի վերնումն Հարսնարանի, Համարի, եթե՛ ի/304ա/ցէ յեղեալ զեղեալ ի սեր փեսային: 192 Ըստ այս խորհրդաբանութեան նախատպելով⁸⁹ զպատիւ յերիս աւուրն կաթողիկէ ո՛չ ընթեռնուն, զի տրամագաղափարութիւն է ըստ յարակալեցումն Հարսնեաց ի վերնում առագաստին: 193 Իսկ ի չորրորդում աւուրն ի սուրբ Սիովն ստորիջի կանոնն վասն արտայայտելոյ, եթե՛ տակաւին եւս յերկրի է Հարսնն՝ փակեալ ընդ պատուիրանան: 194 Ընթեռնու կաթողիկէ, եւ արինագրի Հոգեպաճոյճ զարդ չքնաղութեան ի ՀեզասաՀ Հրամանս փեսային, որպէս զանազանէ զգեղազանս վայելչափառութիւնն Հարսանեացն մեծիմաստն Սողովմնն յերգս երգոցն:

195 Յայս դեմն են կաթողիկէին տարականալոյն ի կեանն. են յերիս աւուրն յառագաստէ ընդ փե/304բ/սային յանբա-

85 Տէ՛ Գ. Գ. Գ. 25

86 Բնագրում՝ ազատելոց (վերականգնում):

87 Տէ՛ Գ. Գ. Գ. 31

88 Գ. Գ. Գ. 7

89 Գ. Գ. Գ. 26

90 Գրիչը բնագրում բաց է թողել «իսկ ի կաթողիկէ ... մարգարեական» (1 տող) հատուածը, որը նկատելով՝ նախորդող «մարգարեական» բառի վերջում խաչանշան է դրել եւ վրիպածը մէկ տողով լրացրել ներքեի լուսանցքում:

91 Յ. Գ. Գ. Գ. 23

92 Գրիչը գրել է նստեալն, սպա ա-ի վրայ չըջման կրկնակէտեր դրել:

88 Բնագրում՝ անքնին (վերականգնում):

89 Գրիչը սկզբում գրել է նախորդելով, սպա տե ... ուծի վերեւում վ:որիկ ա: ... շոել:

Ժանելի միութեանն Հսկեն ոգւոցն, եթե՛ այնուհետեւ ո՛չ են երկու, այլ՝ մի մարմին: 196 Արդ, զի ընթեռնու յերիս աւուրս ընթերցուած ի Գործոց առաքելոցն՝ ո՛չ ըստ պատճառի. Առաքելական ընթերցուածս եւ Գործոց առաքելոց Համատիպ⁹⁰ են, բայց կաթողիկէն՝ յաւետ գերահարաշքան զնոսա, զի նորա տարաբերք են: 197 Իյաւսին ընդ Հարսինն եւ ծանուցանեն զկամս փեսային եւ զանպատում մեծութիւն նորա, զի ամենայն սրբութեամբ եւ պարկեշտութեամբ Հասցէ յար Հարսնեաց ի Հանդիպումն փեսային, որում խաւեալ էր իբրեւ Կոյս սուրբ: 198 Ըստ որում կարգ կանոնին ի քառանորդ աւուրն սկիզբն առնէ ի Սիովն, ի նուաստէն վերաբերէ ի բարձրբարձր է աստուածային խորհուրդն, որ ի վերայ /305ա/ սեղանոյն, եւ ըստ նմայ է Աւետարանն, եւ մերձ է առ նմին կաթողիկէն, եւ ապա՝ Գործս առաքելոցն եւ զանազանեալ արհնութիւն Դաւթի աւետաբեր բարբառով:

199 Ըստ նմին գաղափարի իմասցի եւ զայլ տանիցն Բանոնս: 200 Վասն պաՀոցն քառանարեիցն անկարելի է ասել զի՛ նախատպութիւն կանոնական զքառանորդին կատարումն ի վեցերորդ շաբաթուն յուրբաթին ցուցանէ, եւ զուրբերորդ շաբաթն զատ ոճնի: 201 Ի քառասներորդացն Չատկին Համարի ի սուրբ Քառանորդացն: 202 Այլ աւուր կանոնն ո՛չ կարգեցին, ո՛չ շաբաթու եւ ո՛չ կիրակէի՝ բայց ուրբաթու եւ չորեքշաբաթու: 203 ՉաՀեղ պատուիրանացն զըջմանն եւ զխոստովանութեան ընթերցուածս ո՛չ յայլ եկեղեցիան, այլ ի Սիովն՝ առ ի գիտել, եթե՛ ծումա/305բ/ցեալ են աւուրք ամենայն քառանորդացն՝ սկսեալ ի միակէն, մինչեւ ի լրումն քառանորդեկին, վեցերորդ շաբաթուն յուրբաթին: 204 Կանոնեցին եւ չորեքշաբաթին վասն յիշատակի մասնչորութեանն եւ չարչարանացն Տեառն: 205 Եւ զփառաւորութիւն ուրբաթին քան զչորեք-

շաբաթին աւագ ընթերցուածովքն յայտնեցին:

206 Եւ վասն նշանակելոյ, եթե՛ ամենայն եկեղեցւոյ բարձեալ է զխաչն եւ լիեալ⁹¹ է զՀետ Քրիստոսի, մանաւանդ թէ՛ ընդ նմին իսկ բեւեռեալ ի փրկանետ խաչին, նախանկար կանոնն այսպէս յարմարեցաւ ի գիրս ընթերցուածոց: 207 Բայց սուրբ Հարքն սինՀողիկեայ ժողովն վասն տկարութեան մարդկան եւ վասն Հերձուածոյ շարեացն եւ այլ ընդդիմացելոց իրաց իբրեւ պատճառանս փրկութեան Համարեցան զիջանելն⁹² /306ա/ ընդ այնպիսիան, զոր ասացին իսկ, եթե՛ կամ եղեւ վասն մարդասիրութեան ընդդէմ երթալ տերունական Հրամանին եւ զայս այսպէս կարգեալ, եթե՛ առաջին կանոնք այսպէս Հրամայեն: 208 Եւ զամենայն մեղս ընդ ապաշխարութեամբ արկին յԱստուծոյ ակնարկութեան: 209 Եւ վասն տկարաց եւ Հիւանդաց ի շաբաթու եւ ի կիրակէի ի Հանդիման մարտիրոսաց այսպէս ընդդիմագրեցին՝ ի քակտումն Սկիւթացւոց աղանդոյն:

210 Վասն երկրորդ շաբաթուն առաւրէ կանոնին այս է պատճառ. ի շինել զքաղաքն քառանկին՝ խաչակերպեալ ապաստանի մեղուցելոց զմարգարեիցն զՀիմադրեալն, սուրբ առաքեալքն գիտէին Հոգւովն, եթե՛ այս տեղի իրամատեղոց է ի թշնամեաց խաչին Քրիստոսի, որպէս եղեւ իսկ, ապա վասն անուանեցին զքաղաքն: 211 Աստ զթեթեւու/306բ/թիւնս պատճառս կալան եւ զերկրորդ շաբաթուն լուծին զպաՀս, ի Չատկին շաբաթուն զպատուականութիւն կեղծաւորելով՝ անարգեցին զկրանս պաՀոցն: 212 Չի որովայնից ծառայեցեն յորունք, եւ ո՛չ Աստուծոյ, վասն այնորիկ պարսպեցին զտեղի իրամատիցն եւ աստի սուրբ Յարութեանս կարգեցին զկանոնս մեծապէս Հրաշիւք:

91 Գրիչը, բառի այս վաղագոյն ձեւը չհասկանալով, հետագայում նրա առջեւում փոքրիկ է և անելացրել. իսկ ի-ի վրայ չըջման նշան դրել (իրականում խաչարեւոյ իմաստը՝ ելեալ):

92 Անհրաժեշտ է հասկանալ զիջել իմաստով:

90 Գրիչը սկզբում գրել է համատիպ, սպա ա-ի վրայ կայծակնաձեւ նշան դրել եւ լուսանցքում ուղղում տուել՝ պ:

213 Եւ եղին ընթերցուածս Հաւեղս եւ սկզբնաւորս ի Թագ[աւոր]ութենէ եւ յԱռակաց եւ յԵրեմիայէ, զի պարսպեացին պաշքն: 214 Եւ անտի Չատկին շաբաթուն երկուշաբաթն աւր զայլ պատինն ետուն ընթերցուածութն գլխաւորաւք եւ աւագ սաղմոսիւքն ի սուրբ Մատրանն կատարելով զկանոնն: 215 Բայց Աւետարանն ո՛չ կանոնեցին: Աւետարանն աւուրն յայտնի է, որպէս եւ այլ աւուրց շաբաթուն, բայց ո՛չ կանոնեցին/307ա/ցին, զի մի՛ ի պատճառս Աւետարանին լուծցէ որ զպաշէն, այլ սկզբնամբն յայտնի լիցի, եթէ ծումացեալ է ամենայն շաբաթն: 216 Երկրորդ շաբաթուն առաւելութիւն կանոնին ո՛չ լով զհոմասէրութիւն քառասնորդացն ստուգէ, եթէ միապէս եւ միակարգ պարտ է զգուշանալ ամենայն կարգաց աւուրցն: 217 Այլ ունի մասնաւորաբար եւ զդէմն խորհրդոյն խրատու երախայից՝ թէ որպէս պատշաճ է յովթ եւ ի ժ ընթերցուածոցն զգիր անկեալն ի չափ երախայիցն ուսուցանել մինչեւ յերիս ամն եւ ապա յետ մկրտութեանն խորհրդածութեանն ընթերցուածութն զկատարեալ վարդապետութիւն երախայից եւ այլ քրիստոնէից:

218 Այս է պաճոյճազարդ յարմարումն շարադրութեան ժողովոյն Քաղկեդոնի, զոր արարին որդիքն Բելիարայ առ ի Թագաւորել /307բ/ դերաքրիստոսին ի վերայ կաթողիկէ եկեղեցւոյ: 219 Արդ, տէ՛ս, բարեփա՛ռդ, զորոգայթ զանխլացեալ եւ քաջ վերակացիկ, Հայեցիկ լէ՛ր, զի ստութեամբ ստութեան կարծիս տան եւ ի պատճառս ցորենոյ⁹³ որումն ցանեն: 220 Գան Հանդերձիւք գառանց, եւ ի ներքոյ գայլք յափշտակաւորք կերպարանին ի կերպարանս բարեփառացն Քրիստոսի, եւ են յառաջապաշէստք նեռինն: 221 Այլ ի պտղոյ ևնցա ծանիցում զնոսա՞ ըստ խրատու Փրկչին: 222 Տէ՛ս՝ որպէս զարս շարափառս եւ Հայհոյիչս սուրբս եւ երանելիս անուանեն, եւ զարս զուղղափառս եւ զքրիստոսագգեացս՝ Հերձուածողս եւ շարա-

93 Բնագրում՝ ցորենոյ (վերականգնում):
 = Մատթ. Է 16

դանդս: 223 Ինքեանք զհետ սատանայի ելեալ՝ զձեռս ունելով շահատակեն իբրեւ ի թէատրոնի:

224 Արդ. «այսուհետեւ զհետ երթալով սուրբ Հարցն...»⁹⁴ Հարքն զնոյն բնութեան/308ա/-թիւն Հաւր իջեալ մարմնացեալ ասացին. ո՛չ եթէ յերկուց բնութեանց, այլ զնոյն բնութիւն Հաւր իջեալ մարմնացեալ ասացին: 225 Չի միաբանութիւն Երրորդութեանն ընկղմեալ պաշէսցի մարդկային բնութիւնս, եւ թիւ երեսաց Երրորդութեանն անխախտ պաշէալ մասացէ: 226 Իսկ սոքա Հակառակ սուրբ Հարցն կրանից յերկուց բնութեանց ասացին, զի երկաբուն Քրիստոսի իւրեանց զերեք անձնականն մի բնութիւն աստուածութեանն երկաբուն եւ քառանձնեայս արասցեն, եւ յարքունի եւ ի տերունական ճանապարհէն արտաքս վարելով զինքեանս՝ ընդ անկոխն արասցեն զճանապարհն իւրեանց: 227 Ինքեանք մոլորեցան եւ զամենայն տիեզերս գայթակղեցուցին, զի ասացին ի Քաղկեդոն, եթէ՛ «այսուհետեւ զհետ երթալով սուրբ Հարցն...»՝ առ ի խաբել զպարզամիտսն: /308բ/ 228 Ո՛չ եթէ զհետ Հարցն ելին, այլ զհետ տումարին Ղեւնի, քանզի Հարքն, որ ի Նիկիայ, ի Կոստանդնուպոլիս եւ յԵփեսոս, ըստ մարգարեական Հոգեխաւսութեանցն, ըստ առաքելոցն սաւմանակի մին եւ զմի Տէր խոստովանեցին միով բնութեամբ, եւ ո՛չ երկու:

229 Եւ զի ասացին, եթէ՛ «ի Քաղկեդոնի շարափառք էին եւ բարեփառք, զիս՛րդ մարթի զբարեփառան ընդ շարափառան նզովելք», եւ այսու պատրոզ բանիւք զտգետս զարհուրեցուցանեն, զի աննզով կացցէ մասացէ ժողովն եւ ի շարափառաց, եւ ի բարեփառաց: 230 Այլ դու՛, ո՛վ ուղղափառդ, ի մի՛տ առ եւ ծանխ՛ր զդժնախորամանգութիւնս նոցա որպէս յամենայն կողմանց խաբել մինչեւ զՆիկիայ ժողովն եւ զայլ ուղղափառ ժողովն չասեն, եթէ կենն շարափառոյ էին, /309ա/ եւ կենն՝ բա-

94 Անհրաժեշտ է հասկանալ իբրեւ հեղինակի մէջբերումը Քաղկեդոնի հետեւորդների խօսքից (տե՛ս նաեւ քիչ ստորեւ):

րեփառս, զՔաղկեդոնի ժողովոյն զի աւսեն՝ կէս շարափառս եւ կէս բարեփառ: 231 Ո՛չ Արիոս ի Նիկիայ ժողովոյն Համարն էր, եւ ո՛չ Մակեդոն՝ ի Կոստանդիանուպոլիս, եւ ո՛չ Նեստոր՝ յԵփեսոսին, եւ ո՛չ Եւտիքէս՝ ի Քաղկեդոնի: 232 Եւ ճառս զի՛նչ են, եթէ ի Քաղկեդոնին շարափառ էին եւ բարեփառ, որք զկտակ Հաւատոյն գրեցին եւ կըքեցին: 233 Ըստրութիւն բարոյն եւ չարին ո՛չ կա[յ]. եթէ բարի են՝ ամենքեան բարի են, եւ եթէ չար են՝ ամենքեան չար են:

234 Ի Նիկիայ ժողովն երեք Հարիւր եւ ԺԸ եպիսկոպոս եղեալ են, որ գրեցին զկտակ Հաւատոյ եւ կըքեցին, եւ կտակն արհնեալ է, եւ ժողովն՝ Համասփիւռ: 235 Եւ ի Կոստանդիանուպոլիս ՃԾ լեալ էին, որ զկտակն Հաւատոյ կըքեցին, եւ կտակն արհնեալ է, եւ ժողովն՝ Համասփիւռ: 236 Եւ⁹⁵ /309բ/ յԵփեսոս Մ եպիսկոպոս լեալ են, որք զնոյն կտակ Հաստատեցին, եւ կտակն արհնեալ է, եւ ժողովն՝ Համասփիւռ: 237 Եւ ի⁹⁶ Քաղկեդոն ՈՒԶ եպիսկոպոս եղեալ են, որք միաբան, միա-

կամ, միասիրտ, միասորհուրդ երկուս բնութիւնս Քրիստոսի ի սաւման Հաւատոցն ընկալան եւ գրով զնոյն կտակ Հաստատեցին. եւ սաւման կտակին նզովեալ է, եւ վեց Հարիւր եւ ԼԶ եպիսկոպոսքն նզովեալ են, որք զսաւմանն զայն արձանացուցին: 238 Ո՛չ ի Նիկիայ ժողովն, եւ ո՛չ յայլ ուղղափառ ժողով Հերձուածող լեալ է, եւ ո՛չ ի Քաղկեդոնին բարեփառ որ:

239 Ապա դու նման լէ՛ր, Հաւատարիմ ծառայդ Քրիստոսի, [...] ⁹⁷ զի թծպէտ եւ եղեալ են ի Նիկիական ժողովն Խ եպիսկոպոս արիոսական ձեռնադրութեամբն, զիր տալով դիւբեղոն⁹⁸ ժողովոյն՝ ընդունելի եղեալ են եւ ընդ սուրբ Հարսն սուրբ /310ա/ անուանեալ են ընդ սինչոգիկէ կարգին. եւ թծպէտ էին ի Քաղկեդոնին բազում ուղղափառք, սակայն վասն երկնչելոյ ի թագաւորէն յուրաստ եղեն զուղ[ի]ղն⁹⁹ խոստովանութիւն եւ ուրացան զմի բնութեան դաւանումն: 240 Այլ մեք դաւանեմք յերկուց միացեալ զՏէր մեր Յիսուս Քրիստոս եւ փառս տացուք նմա ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյն յաւիտեանս. ամէ՛ն:

97 Թերեւս, մեր դրած բազմակէտի տեղում միտքը կիսատ է թողել ինքը՝ Յովհանն Օձնեցի, որին շփոթութեան մէջ է գցել հետագայ շարադրանքի ձգտածութիւնը:

98 «Գրքոյկ», «հրովարտակ», «քողոքագիր», «հրաւիրագիր» նշանակութեամբ լատիներէն լիբելլոս բառի՝ հայերէնում սուսջին անգամ հանդիպող փոխառութիւնն է:

99 Բնագրում վրիպակով կամ մի վաղ գրելաձեւով՝ գուղեղն (վերականգնում):

95 Գրիշը եւ բառը սխալմամբ երկու անգամ է գրել (309ա-ի էջաւարտին եւ յաջորդ էջակգրում):

96 Գրիշը այս ի-ն սկզբում վրիպել է, ապա լրացրել երկու բառերի միջեւ՝ վերեւում:

Դրամական գրություններում արամեական տառածեղերի համեմատական աղիւսակ 2

	չ	ճ	ց	d	ձ	w	չ	ճ	չ	y	k	ղ	m	n	s	ր	ր	ճ	զ	ր	ճ	t
Արամեական տառապատկեր	𐤑	𐤒	𐤓	𐤔	𐤕	𐤖	𐤗	𐤘	𐤙	𐤚	𐤛	𐤜	𐤝	𐤞	𐤟	𐤠	𐤡	𐤢	𐤣	𐤤	𐤥	𐤦
Պարսից	𐬀	𐬁	𐬂	𐬃	𐬄	𐬅	𐬆	𐬇	𐬈	𐬉	𐬊	𐬋	𐬌	𐬍	𐬎	𐬏	𐬐	𐬑	𐬒	𐬓	𐬔	𐬕
Պարթևաստանի	𐭀	𐭁	𐭂	𐭃	𐭄	𐭅	𐭆	𐭇	𐭈	𐭉	𐭊	𐭋	𐭌	𐭍	𐭎	𐭏	𐭐	𐭑	𐭒	𐭓	𐭔	𐭕
Սողդիանայի	𐭆	𐭇	𐭈	𐭉	𐭊	𐭋	𐭌	𐭍	𐭎	𐭏	𐭐	𐭑	𐭒	𐭓	𐭔	𐭕	𐭖	𐭗	𐭘	𐭙	𐭚	𐭛
Էլիմայիսի	𐭆	𐭇	𐭈	𐭉	𐭊	𐭋	𐭌	𐭍	𐭎	𐭏	𐭐	𐭑	𐭒	𐭓	𐭔	𐭕	𐭖	𐭗	𐭘	𐭙	𐭚	𐭛
Խալդայի	𐭆	𐭇	𐭈	𐭉	𐭊	𐭋	𐭌	𐭍	𐭎	𐭏	𐭐	𐭑	𐭒	𐭓	𐭔	𐭕	𐭖	𐭗	𐭘	𐭙	𐭚	𐭛
Նաբաթեայի	𐭆	𐭇	𐭈	𐭉	𐭊	𐭋	𐭌	𐭍	𐭎	𐭏	𐭐	𐭑	𐭒	𐭓	𐭔	𐭕	𐭖	𐭗	𐭘	𐭙	𐭚	𐭛

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԹՈՒԱԿԱՆԻ ՇՈՒՐՋ

Բաբկեն Յարութիւնեան

Կորիւնի եւ Հայ այլ պատմիչների տեղեկութիւնների լոյսով վաղուց ի վեր փորձեր են արուել ճշտելու Հայոց գրերի ստեղծման թուականը: Ուսումնասիրողները, քննելով միեւնոյն աղբիւրները, յանգել են երկու հիմնական եզրակացութեան. գրերը ստեղծուել են 404, 405, 406 կամ 407 թուերին, որի համար հիմք են ծառայել Կորիւնի երկի վերջաբանի ժամանակաշրջանի տուեալները, եւ 392-393 թթ. կամ 392-398 թթ. միջոցին, որի համար հիմք են ծառայել մասնաւորապէս Ղազար Փարպեցու տեղեկութիւնները: Եթէ առաջին տեսակէտի օգտին հանդէս են եկել այնպիսի դէմքեր, ինչպիսիք են Նորայր Բիւզանդացին, Հ. Ն. Ակիւնեանը, Գ. Ֆետիսեանը, Հ. Յ. Թորոսեանը, Հ. Աճառեանը, Մ. Աբեղեանը, Ե. Տէր-Մինասեանը, Ա. Աբրահամեանը, Ա. Մարտիրոսեանը եւ ուրիշներ, ապա երկրորդ եզրակացութիւնը պաշտպանել են այնպիսի նշանաւոր հայագէտներ, ինչպիսիք են Մ. Օրմանեանը, Լէօն, Ն. Արոնցը եւ Յ. Մանանդեանը: Չիշտ է, եղել են նաեւ գրերի ստեղծման այլ թուականների առաջարկներ, ասենք Գ. Տէրկանների առաջարկները, ասենք Գ. Տէրկանների Մկրտչեանի (413), Յ. Մարքուարթի (402/3) եւ այլոց կողմից, սակայն դրանց մտադիր չենք անդրադառնալ, քանի որ դրանք ոչնչով հիմնաւորուած չեն: Առաջադրեալ եզրակացութիւն է ստացել հայագիտութեան մէջ եւ, ինչպէս նշեցինք, հիմնաւորութեան մէջ եւ, ինչպէս նշեցինք, հիմնաւորութեան մէջ Կորիւնի երկի վերջաբանի ժամա-

նակագրական տուեալներով, որոնք հաստատու են, որ «... լինի համար ամաց հաւատոց երանելոյն (իմա՛ Մաշտոցի-Յ. Բ.) ամբ քառասուն եւ հինգ, եւ ի դպրութեան Հայոց մինչեւ ցվախճան արքոյն՝ ամբ երեսուն եւ հինգ, որք համարին այսպէս. թագաւորեալ Կրմանայ Պարսից արքայի ամս վեց. եւ Յազկերտի ամս քսան եւ մի [եւ Վրամայ ութ եւ տասն], եւ յառաջնումն ամի երկրորդ Յազկերտի որդոյ Վրամայ վախճանեցաւ երանելին:

Եւ արդ առնու համար ամաց արքոց հաւատոց ի չորրորդում ամէն Կրմանայ արքայի մինչեւ ցառաջին ամն երկրորդ Յազկերտի որդոյ Վրամայ, եւ դպրութեան Հայոց յութերորդ ամէ Յազկերտի առեալ սկիզբն՝: Կորիւնի երկի հրատարակիչ Մանուկ Աբեղեանը, քննութեան առնելով նշուած տուեալները, եզրակացնում է, որ բնագրի մէջ պակասում են Վրամ թագաւորի գահակալութեան տարիները, ըստ որում, նրա կարծիքով, սկզբնապէս անպայման եղել է այն, քանի որ այլապէս Մաշտոցի կրօնաւորութեան տարիների հաշիւը սխալ կը լինի: Գումարելով Կրմանի թագաւորութեան 6 (ի դէպ, բնագրում նրա անունը պահպանուել է «Դիսմոնայ» սխալ գրութեամբ), Յազկերտ Ա-ի իշխանութեան 21, երկուսը չպահպանուած Վրամ թագաւորի 18 տարիները եւ հաշուարկից դուրս թողնելով Յազկերտ Բ-ի գահակալութեան առաջին տարին՝ հեղինակը ստանում է 45 թիւը²: Առաջին հայեացքից Կորիւնի երկի յիշեալ ժամանակագրական տուեալները անխոցե-

լի են: Ուստի, յենուելով Մեսրոպ Մաշտոցի մահուան թուականի վրայ, որը տոմարագիտական ճշգրիտ հաշուարկներով ընկնում է 440 թուականի փետրուարի 17-ին, կարելի է գալ եզրակացութեան, որ Մաշտոցը դարձել է կրօնաւոր 395 թուականին, իսկ գրերը ստեղծուել են 405 կամ 406 թուականին: Ճիշտ է, այս բաւական կուռ կառոյցի մէջ ճեղք է առաջացնում ժամանակագրութեան այն հաղորդումը, թէ հայոց դպրութիւնն սկսուել է Յազկերտի ութերորդ տարուց, այսինքն՝ 407 թուականին, քանի որ վերջինս իշխել է 399-420 թթ.: Սակայն սա միակ հակասութիւնը չէ, քանի որ Կորիւնի երկի մէկ այլ տեղեկութեան համաձայն Մաշտոցը Վաւաշապուհի թագաւորութեան հինգերորդ տարում մեկնել է Արամի կողմերը (իմա՝ Ասորիք - Յ. Բ.)՝ Եղեսիա եւ Ամիգ քաղաքները, ինչպէս նաեւ Սամոսատ, նոյն տարում ստեղծել է հայոց գրերը եւ Վաւաշապուհի վեցերորդ տարում վերադարձել է Հայաստան՝ հանդիսաւորութեամբ ընդունուելով թագաւորի, կաթողիկոսի եւ նախարարների ու ժողովրդի կողմից³: Ելնելով բերուած հաղորդումներից՝ դժուար չէ եզրակացնել, որ եթէ գրերը ստեղծուել են 405 կամ 406 թուին, ապա Վաւաշապուհի գահակալութեան սկիզբն ընկնում է 400 կամ 401 թուականին: Ուսումնասիրողների քննութեան համաձայն՝ Վաւաշապուհը կարող էր իշխել մինչեւ 414 թիւը, հետեւաբար, բոլոր ուսումնասիրողները, որոնք գրերի գիւտը դնում են 405 թուին, Վաւաշապուհի գահակալութիւնը դնում են 400-414 թթ.: ծնելով որոշ հարցադրումներ, որոնք յստակ պատասխանի կարիք ունեն: Ամենակարեւոր հարցադրումն այն է, որ հայոց խորհրդով Գ թագաւորի՝ պարսից արքունիքի կողմից գահընկէց անելուց յետոյ թագաւորական իշխանութիւնը երկրում պահպանուել է, թէ ոչ: Եթէ գրերի գիւտն, իրօք, տեղի է ունեցել 405 թուին, ապա ստիպուած ենք աներկբայ ընդունել, որ

խորհրդով Գ-ին կամ Վերջինին յաջորդել է անտերնչութեան մի շրջան մինչեւ Վաւաշապուհի գահ բարձրանալը, իրողութիւն, որը սակայն իր հաստատումը չի գտնում սկզբնաղբիւրներում: Հետեւաբար, գրերի գիւտի թուականի ճշտման համար մեծ կարեւորութիւն է ներկայացնում Վաւաշապուհի իշխանութեան տարիների յստակեցումը:

Կորիւնի մի հաղորդման համաձայն՝ Մաշտոցը, որը մանուկ հասակում հելլենական կրթութիւն էր ստացել, գալիս է հայոց թագաւորների արքունիք եւ ծառայութեան անցնում արքունի դիւանատանը՝ Առաւան անունով մէկի հազարապետութեան շրջանում⁴: Ի միջի այլոց, որոշ ուսումնասիրողներ փորձել են անգամ Հայաստանում անտերնչութեան շրջանը կապել Առաւանի կառավարման տարիների հետ, սակայն դա բնաւ ընդունելի վարկած չէ, քանի որ Կորիւնը միաժամանակ յիշատակում է Մեծ Հայաստանի Արշակունիների արքունիքը⁵: Վերն ասուածից հետեւում է, որ Վաւաշապուհը կարող էր գահ բարձրանալ խորհրդով Գ-ից անմիջապէս յետոյ կամ էլ, ըստ Կորիւնի ժամանակագրական ցուցակի, որոշ ժամանակ անց: Մենք շուտով ցոյց կը տանք, որ Վաւաշապուհն իշխել է գործնականում խորհրդով Գ-ի գահընկէցութիւնից անմիջապէս յետոյ, հետեւաբար, կարեւոր է պարզել, թէ երբ է աւարտուել խորհրդով Գ-ի առաջին գահակալութիւնը: Դիմենք պատմիչների հաղորդումներին: Մեծահռչակ Մովսէս Խորենացին, անդրադառնալով խորհրդով Գ-ի ձերբակալութեանն ու Անյուշ բերդում բանտարկուելուն, նշում է, որ նա թագաւորեց ընդամէնը 5 տարի⁶: Ըստ որում, նա հայոց թագաւորի գահընկէցութիւնը կապում է պարսից Արտաշիւր թագաւորի գործունէութեան հետ: Յայտնի է, որ Արտաշիւր արքան իշխել է ընդամէնը 4 տարի՝ 379-383 թթ.: Հետեւաբար, Պատմաճօր երկում գործ ունենք թիւրիմացութեան հետ, որովհետեւ

խորհրդով Գ-ն մինչեւ 383 թուականը չէր կարող անգամ գահ բարձրանալ: Հարկ է նշել, որ Պատմաճօր երկում պարսից Շապուհ Բ եւ Շապուհ Գ թագաւորները միահիւսուել են մէկ անձի մէջ, որը եւ պատճառ է դարձել, որ Պատմաճօրը խորհրդով Գ-ի գահընկէցութիւնը վերագրի Շապուհ Բ-ից յետոյ գահ բարձրացած Արտաշիւրին: Իրականում, ինչպէս հաղորդում է Ղազար Փարպեցին, խորհրդով գահընկէց էր արուել պարսից Շապուհ Գ թագաւորի կողմից (383-388)՝ որոշ բանասարկութիւնների պատճառով⁷: Եւ, եթէ ելնենք այն իրողութիւնից, որ խորհրդով Գ-ն իշխեց 5 տարի եւ, ըստ Պատմաճօր, թագաւոր ճանաչուեց պարսից Շապուհ արքայի կողմից (ըստ հեղինակի՝ Շապուհ Բ-ի, իրականում՝ Շապուհ Գ-ի - Յ. Բ.), ապա խորհրդով Գ-ի գահակալութիւնն ընկնում է Շապուհ Գ-ի իշխանութեան սկզբում, իսկ գահընկէցութիւնը՝ նրա կառավարման վերջում, քանի որ, ինչպէս յստակ հաւաստում է Ղազար Փարպեցին, խորհրդով Գ-ին գահընկէց արեց Շապուհ Գ-ն⁸: Համաձայն Ղազար Փարպեցու, որը միանգամայն համահունչ է Կորիւնին, Մաշտոցը, որ յունական կրթութիւն էր ստացել, գալիս է խորհրդով Գ-ի արքունիքը եւ ծառայութեան անցնում արքունի դիւանում: Թէ Մաշտոցը ե՞րբ է եկել արքունիք, մեզ յայտնի չէ, սակայն Փարպեցու միւս հաղորդումն այն մասին, որ Մաշտոցը, պաշտօնավարելով արքունիքում մի քանի տարի, կրօնաւոր է դառնում եւ հաստատում անապատական վայրերում մինչեւ հայոց Վաւաշապուհ վայրերում մինչեւ հայոց Վաւաշապուհ թագաւորի 5-րդ տարին⁹, ենթադրել է տալիս, որ նա Վաղարշապատ է ժամանել խորհրդով Գ-ի իշխանութեան սկզբներում եւ կրօնաւոր է դարձել նոյնպէս խորհրդով գահընկէցութեան շրջանում: Հետեւաբար, Մաշտոցի կրօնաւոր դառնալուց մինչեւ Մաշտոցի կողմէն դառնալուց մինչեւ մահը անցել է ոչ թէ 45 տարի, ինչպէս հաւաստում է Կորիւնի երկի վերջաբանի ժա-

մանակագրական աղիւսակը, այլ առնուազն՝ 52 տարի:

Պատմաճօր եւ Ղազար Փարպեցու աշխատասիրութիւններից աներկբայ կարելի է եզրակացնել, որ հարցիս քննութեան տեսակէտից շատ կարեւոր է խորհրդով Գ եւ Վաւաշապուհ թագաւորների իշխանութիւնների միջեւ անտերնչութեան շրջանի բացակայութիւնը: Պատմաճօրը, շփոթելով որոշ իրողութիւններ, այնուամենայնիւ, նշում է, որ Արտաշիւրը (իմա՝ Շապուհ Գ-ն), գահընկէց անելով խորհրդով Գ-ն, գահ է բարձրացնում նրա եղբայր Վաւաշապուհին¹⁰, այսինքն՝ իշխանութեան անցումը կատարում է անմիջապէս: Այսուհանդերձ, հակառակ Մովսէս Խորենացու վերոյիշեալ տեղեկութեան, խորհրդով Գ-ի եւ Վաւաշապուհի գահակալութիւնների միջեւ ընկած է ոչ մեծ ժամանակաշրջան, երբ թագաւորութիւնը պահպանում է, սակայն թագաւոր չկայ: Այսպէս, Ղազար Փարպեցին նշում է, որ խորհրդով Գ-ի գահընկէցութիւնից յետոյ հայերը խնդրեցին Շապուհ Գ-ին Հայաստանում այլ թագաւոր կարգել, եւ վերջինս գահ բարձրացրեց խորհրդով եղբայր Վաւաշապուհին ու ուղարկեց Հայաստան¹¹: Ի՞նչ եզրակացութիւնների կարելի է գալ: Պատասխանը յստակ է: խորհրդով Գ-ն չէր կարող գահընկէց արուել մինչեւ 388 թուականը, իսկ Վաւաշապուհը գահ բարձրանալ 388 թուից յետոյ:

Գրերի գիւտը, պատմիչների համաձայն, տեղի ունեցաւ Վաւաշապուհի գահակալութեան 5-րդ տարում. հետեւաբար 392 կամ, որ աւելի հաւանական է, ինչպէս ստորեւ ցոյց կը տրուի, 393 թուին: Սակայն այստեղ էլ մենք բախուում ենք մի հանգամանքի հետ, որը կարօտ է քննութեան: Պատմաճօրը հաւաստում է, որ Վաւաշապուհը թագաւորեց 21 տարի¹², իսկ, ըստ Ղազար Փարպեցու, նա թագաւորեց բազում տարիներ եւ մահացաւ խոր

Վուստյանի գահակալութեան տարուայ վերջերին:

Հայոց գրերի գիտությունը իրականացրել է Վուստյանը 1600-ամեակը պատվելու նշանում 1993 թվականին:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Կորիս, Վարդ Մեսրոպյան վարդապետի, տե՛ս - Մատենագիրք Հայոց, հտ. Ա (Ե դար), էջ 257:
- 2 Տե՛ս Կորիս, Վարդ Մաշտոցի, Երևան, 1981, էջ 330:
- 3 Անդ, էջ 94-103:
- 4 Անդ, էջ 85:
- 5 Անդ:
- 6 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, գիրք Գ, գլ. Ծ, - Մատենագիրք Հայոց, հտ. Բ (Ե դար), էջ 2074-2075:
- 7 Ղազար Փարպեցի, Պատմություն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, դրուագ Ա, գլ. Թ, - Մատենագիրք Հայոց, հտ. Բ, էջ 2211
- 8 Անդ:
- 9 Անդ, գլ. Ժ, էջ 2212:
- 10 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, գիրք Գ, գլ. Ծ, - Մատենագիրք Հայոց, հտ. Բ, էջ 2075:

- 11 Ղազար Փարպեցի, Պատմություն Հայոց..., դրուագ Ա, գլ. Թ, - Մատենագիրք Հայոց, հտ. Բ, էջ 2211:
- 12 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, գիրք Գ, գլ. ԾԵ, - Մատենագիրք Հայոց, հտ. Բ, էջ 2084
- 13 Ղազար Փարպեցի, Պատմություն Հայոց..., դրուագ Ա, գլ. ԺԱ, - Մատենագիրք Հայոց, հտ. Բ, էջ 2216: Ղազար Փարպեցին իր հերթին թիրիմացություն է թող տալիս՝ յայտարարելով, որ Վուստյանի մահից յետոյ մահանում է պարսից Ծապունի թագաւորը, եւ հայերը նրան յաջորդած Վուստյանին խնդրում են Հայաստանում կրկին գահ բարձրացնել Խորենացիին (դրուագ Ա, գլ. ԺԲ): Սակայն Վուստյանը մահացել է 399 թուին եւ ժամանակագրական առումով ոչ մի կերպ չէր կարող յաջորդել Վուստյանին:
- 14 Ստեփանոսի Տարոնացույ Ասողկան Պատմություն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 73-74:
- 15 Անդ, էջ 74:
- 16 Մովսես Խորենացի, գիրք Գ, գլ. ԾԲ
- 17 Յ. Մանանդեան, Բնական տեսություն հայ ժողովրդի պատմության, հտ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 245:
- 18 Սամուելի քահանայի Անցույ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 68:
- 19 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, գիրք Գ, գլ. ԿԷ, - Մատենագիրք Հայոց, հտ. Բ, էջ 2110

ՀՈՄԱՆԻԾՆԵՐԻ ԶԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Նազիկ Յովհաննիսեան

«Միջնադարեան Հայաստանի բառարանագրական յուշարձանները» երկհատոր աշխատութեան էջերում Հ. Ամալեանը հաւաստում է, որ այդ շրջանում գրուած, թարգմանուած, ամենատարբեր գիտութիւններին վերաբերող աշխատութիւններում, այլեւայլ ստեղծագործութիւններում հանդիպող անհասկանալի բառերի մեկնութիւններն ու բացատրութիւնները սկզբնապէս կցուել են բնագրերին: Հետագայում ստեղծուել են բացատրական, ուղղագրական, թարգմանական, մասնագիտական բառարաններ, որոնք, սակայն, ինչպէս վկայում է հեղինակը, փոքրածաւալ են եղել, չեն արտացոլել լեզուի բառային ամբողջ կազմը: Այդուհանդերձ դրանք անչափ կարեւոր են եղել գիտութեանը անուշաբույր, ուսումնական գործին նպաստելու առումներով: Այդ է վկայում նաեւ հէնց քննուող ձեռագիր բառարանների վերնագիրը՝ «Հանդէս բանաստեղծաց փառանքաւոր ստորագրի նորավարժիցն զանունաբար սակս», ասել է՝ օգտագործելով միջնադարեան ձեռագիր բառարանների բացատրութիւնները՝ նորավարժների՝ դեռակիրթների, համբակների, աշակերտների խօսքը կատարելագործելու, բառապաշարը հարստացնելու ձեռնարկ: Բառարանի գործնական բնույթով են պայմանաւորուած եւ բառարաններում առկայ հետեւեալ ծանօթութիւններն ու յղումները. «եթէ պիտոյ իրցէ», «եթէ պիտոյ իցէ դնի եւս», «եթէ պիտոյ իցէ տես», «եթէ յարմար իցէ բանին. դիր եւս...», «վասն շինութեան Աստուծոյ», «վասն ծուլութեան», «վասն որոնեծոյ», «վասն հպարտութեան» եւ այլն (տե՛ս Մաշտոցի անուան Մատենագրարանի

թիւ 566, 3110, 5995, 6762 ձեռագիր բառարանները):

«Հանդէս բանաստեղծաց...»-ը, ըստ Հ. Ամալեանի, հնագոյն բառարաններից է՝ վկայուած XII դարից: Նրա հաւաստմամբ՝ «բառարանի նախագաղափար օրինակը չի պահպանուել, գրութեան ստոյգ ժամանակը, տեղը եւ հեղինակը անյայտ են»¹:

Հարկ է նշել, որ XII-XVIII դդ. վկայուած ձեռագիր այս բառարանները Մատենագրարանի ձեռագրացուցակներով² 66-ն են՝ ըստ դարերի հետեւեալ բաշխումով՝

- XII-XIII դդ. - մէկ՝ թիւ 5596.
- XIII դդ. - մէկ՝ թիւ 4612.
- XIV դդ. - եօթ՝ թիւ 530, 1654, 2371, 3937, 4149, 5919, 8198³
- XV դդ. - չորս՝ թիւ 266, 2335, 5925, 7117.
- XVI դդ. - եօթ՝ թիւ 532, 538, 2372, 3197, 5126, 7250, 8106.
- XVII դդ. - երեսունինը⁴
- XVIII դդ. - եօթ՝ թիւ 566⁵, 843, 3110, 3450, 6762, 9166, 9992:

Բառարանի ամբողջական վերնագրի մասին խօսելիս Հ. Ամալեանը նշում է, որ «բառ է գեղջուկը» արտայայտութիւնն աւելացուել է հետագայում «...վերնագրի վերջից»⁶, աւելի ստոյգ՝ XIV դարում: Թերեւս, հարկ է յաւելել, որ XII-XVI դդ. վկայուած ձեռագիր բառարաններն ունեն հետեւեալ վերնագրերը (նոյն վերնագրի տարբերութիւնները տրւում են ա, բ, ... համարակալումով)